

1973

235

U-35

1913

2010

ՀԱՀ-576
21X17.9/18
Չեռագրի իրաւունքով.
by

14285

Չեռագրի իրաւունքով.

24.ս.հ.

=ՄԱՐԳԱՐԵՆԵՐ=

ԵՍԸՑԻ, ԵՐԵՄԻՑ, ԵԶԵԿԻԼ, ԴԵՆԻԼ, ԱՎՈՒ ԵՒ ԱՐՈՎՈ.

Կազմեց
Խորեն Տափ. Խուցեան

Թ. Ա Ֆ Լ Ի Ռ Ո
Արագատիս Շխաղեամանօք ելիզ. վողոց Ա 17
1913

235
5-55

Հ Արմ.
2-12262

235
Ա-35

2-12262

ԱՆ-576

Չեսագրի իրաւունքով.

ՄԱՐԳԱՐԵՆԵՐ

ԵՍԱՅԻ, ԵՐԵՄԻՔ, ԵԶԵԿԻԼ, ԳԵՒՆԻԼ, ԱՌՈՒ ԵՒ ԱՐԱՎՈ.

Կ Ա Շ Ա Ր Ե Ր

Խորեն բան. Խուզեան

ՀԱՅ. 21432

Թ Բ Ա Լ Ի Ս
Արագածոտիպ Շխավեանօս Ելիզ. փողոց Ա 17
1913

14285

(18)

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

- Հասկացողութիւն մարզարէի եւ մարզարէութեան մասին.

57321-ահ



1464-63

2001

Իսրայէլի Աստուածը, որ կոչւում էր Եհովա
կամ Ագօնա սիրում էր իր ժողովրդին, դարեր
շարունակ պահել պահպանել էր նրան:

Ահա այն անհատները, որոնք միջնորդ էին
լինում Աստուծոյ և Նորա սիրած ժողովրդի մէջ՝
կոչւում էին մարզարէները, յատկապէս Իսրայէլի
մէջ մարգարէները մեծ գեր են խաղացել: Դոքա
էին, որ գուշակում էին Իսրայէլի ապագան և
Աստուծոյ պատգամները յայտնում ժողովրդին:

Աստուած առանձին յայտնում էր իր կամքը
մարգարէին, իսկ վերջինս՝ ժողովրդին: Եթե խօ-
սում էր մարգարէն, դա նշանակում է խօսում
է ինքն Աստուած:

Մարգարէները կոչւում էին մեխանողներ:

Դրանք իբրև Աստծոյ ծառաներ, տեսիլներ
էին տեսնում: Աստուած տեսիլներով էր յայտ-
նում իր կամքը. այդ տեսիլներն ահազին նշանա-

կութիւն էին ունենում իսրայէլի ապագայ կեանքի համար:

Աւելի նախնական շրջանում մարդարէները կոչում էին նարիներ, որոնք շրջում էին խմբերով: Երբ իսրայէլի մէջ պատահում էր որևէ դժբախտութիւն, երբ հեթանոս ազգերը յաղթութիւն էին տանում և Աստուծոյ ընտիր ժողովուրդը ընկճուռմ, նարիները վառում էին Եհովայի սիրով. այդ սիրով և ոգեսրութեամբ վարակում էին շատերին, յառաջ էին բերում ժողովրդական շարժում. իրենց հետ խառնում — միացնում էին թէ հասարակ և թէ բարձր գասակարդի մարդկանց, մինչև իսկ իշխաններին. մարդարէների այդ քայլը ազդում էր և թագաւորի արարքի վրայ:

Մարդարէներն էին իսրայէլի մէջ այն մաքուր, անկաշառ անձնաւորաթիւնները, որոնք ամեն բանից բարձր էին դասում իսրայէլի ժողովրդի բարօրութիւնն ու երջանկութիւնը. իսկ այդ երջանկութեանը իսրայէլը կհասնի միմիայն Եհովայի գծած ճանապարհով:

2. Մարդարէների դերը.

Մարդարէների կատարելիք դերը որոշում է ինքն Աստուծ եղեկիէլ մարդարէին ուղած

խօսքերով, թէ դու, մարդարէ, իսրայէլի տան համար դէտ-զիտով, հսկող պահապանն ես. զու ինձանից կլսես պատգամներս և կյայտնես ժողովրդին: (Եղ. Գ. 17): Աստուծած սիրում էր մարդկանց, մարդարէն միջնորդ էր Աստուծոյ և մարդկանց մէջ. նոքա ժողովրդի մէջ պէտքէ վառ պահէին արգարութիւնը, բարեպաշտութիւնը. Նոքա մարդկանց պէտքէ յոյց տային նրանց յանցանքները. զգուշացնէին մեզը գործելուց. մեղաւորներին ապաշխարանք նշանակէին: Մի խօսքով մարդարէն պէտքէ լինէր ժողովրդի պահապան, այնպէս, ինչպէս մի ամրոցի աշտարակների վրայ հսկող պահապաններ, որոնք բերդի մէջ ապահինածներին պահպանում են և զգուշացնում թշնամու կողմից եկող վասնգի ժամանակ, այդպէս էլ մարդարէն իսրայէլի տան հսկող-պահողնէ, որ ապագայ գալիք պատահարների հանդէպ իսրայէլը անպատրաստ չգտնուի:

Դատաւորութեան ժամանակ, այնպիսի անկեղծ, մաքուր, եռանդով լի անհամներ երեացին, իբրև մարդարէ, որոնք իրենց զլուխը մոռացած, նուիրուեցին ժողովրդի բարօրութեան, բարեպաշտութեան և օրէնքի պաշտպանութեանը: Նոքա անվեհեր կերպով, իրենց կտրուկ խօսքով, դուրս էին գալիս և համարձակ քարոզում, եղած յանցանքները յանդիմանում, յուղութեան հրա-

սիրում ամենքին, թէ մեծին և թէ փոքրին, թէ շինականին և թէ քաղաքացուն և թէ իշխաններին ու մինչև անգամ թագաւորներին. թագաւորների թուլանալը բարեկաշտութեան և առտուածապաշտութեան մէջ՝ մարդարէների արդար զայրոյթնէր շարժում։ Վտանգաւոր պատերազմի ժամանակ, եթէ հարկաւոր լինէր, մարդարէները իրենց ամբողջ ոյժերը լարում էին, որպէս զի թագաւորը, գործի ղեկավարը չփառուի. խրախուսում էին նրանց, որ իրենց յոյսը Աստծոյ օգնութեան վրայ զնեն և արիաբար գիմաղբեն թշնամուն։ Այսպէս ուրեմն մարդարէի գերը որոշուած էր, որ նա 1) հսրայէլի մէջ պէտքէ պահպանէր ճշմարիտ հաւատն ու բարեպաշտութիւնը 2) Յանցանքները սահմանարէր, իսկ մեղաւոր մարդկանց մէջ զղջման զգացումը զարթեցնէր և 3) վաս պահէր ժողովրդի մէջ Աստծոյ խոստումը, ապագայի յոյսը այսինքն Մեսիայի գալուստը։

3. Մարդարէութեան զինաւոր առարկան.

Մարդարէների քարոզների և ձառերի կուրիզը, զինաւոր նիւթը խոստացած Մեսիան է, որևէ կազմում է Հին-Ռւխտինպատակը։ Մարդարէները ցոյց էին տալիս նորա Դաւթից սեռուիլը

(Ես. ՓԱ. 1—3 ժ. Ել. 9լ. 15, 16 ԻԳ. 5, 6. Դ. 23, 24), Նորա ծնունդը կոյսից Բէթղէնէմում (Ես կ. 14 Միք. Ե. 2): Մարդարէները որոշել են և Նրա ծննդեան տարին — գերութիւրից յետոյ, Երուսաղէմի նորոգութեան եօթանասուն եօթներորդ տարին (Դան. Թ. 25-27), Նորա քարոզութեան յաջողութիւնը Գալիլիայում (Ես. Թ. 1, 2). Նորա հրաշագործութիւնը (Ես. ԼԵ. 3-6), Նորա հանդիսաւոր մուտքը Երուսաղէմ (Զաք. Թ. 9). Մատնուիլը 30 արծաթով (Զաք. ԺԱ. 12, 13), Զարչարանքը, Յարութիւնը և Նորա թագաւորութեան հաստատուելը (Ես. Ծ. 6 ԾԳ. 1—10 Ովս. Զ. 2. Ես Բ. 2—4 ԽԹ. 6. Մադ. Ա. 10, 11 Գ. 1 Անդ. Բ. 8 և այն):

4. Մարդարէների գրուածքները.

Մարդարէներն իրենց քարոզութիւնները մեծ մասամբ յայտնել են բանաւոր կերպով մինչև անգամ Եղիան և Եղիսէն, որոնք անմահութեան փառք ձեռք բերին, նրանք ևս ոչ մի գրուածք չեն թողել։ Մարդարէներից միայն 16 հոգի թողել են գրաւոր քարոզներն ու ճառերը. դրանք հետեւալներն են. 1. Եսայի 2. Երեմիա 3. Եղիկիէլ 4. Դանիէլ 5. Ովսէ 6. Յովէլ 7. Ամազու 8. Արդիու 9. Յոնան 10. Միքիա 11. Նա-

12. Ամբակում 13. Սովորիա 14. Անգէա
15. Զաքարիա և 16. Մաղաքիա:

Սրանցից առաջին չորսը — Եսային, Երեմիան,
Եղիկիէլը և Դանիէլը կոչում են մեծ մարդա-
րէներ, իսկ մնացածները՝ փոքր մարդարէներ:
Վերոյիշեալ 16 մարդարէներին և նրանց գրուածք-
ները մեր եկեղեցին ընդունում է կանոնական,
իսկ մարդարէութիւնների շարքում Ս, Գրքում
եքած Բարուքայ մարդարէութիւնը և Երեմիայի
ողբը մեր եկեղեցին կանոնական չէ ընդունում,
եկեղեցում չեն կարդացւում, իսկ միւսները
կարդացւում են:

5. Մարզարէական գրուածքների սովանդակութիւնը.

Մարդարէների գրուածքների մէջ պարզաբան-
ուած են Աստուծոյ խոստումը և Մովսիսի օրէն-
քները. ցոյց է տուած այն ճանապարհը, որոնցով
պէտքէ ընթանայ Իսրայէլը կատարելագործուելու
և մօտենալու իր Աստուծուն: Այդ գրուածքներով
Եհովան զգուշացնում է Իսրայէլին, չշլանալ ար-
տաքին փայլով, հեթանոսների ժամանակաւոր
յաղթութեամբ ու մեծութեամբ: Մարդարէների
մէջ ցոյց է տուած, որ բոլոր ազգերը նախախ-
նամութեան ձեռքին զէնք են, շատերին կործա-
նելու, շատերին էլ բարձրացնելու, ոչնչացնելու

ամբարիշտներին, իսկ անընդունակներին զգաս-
տացնելու: Աստուած ստեղծել է ամեն ինչ և
ում ինչ կամենում է կտայ. աղգերը վայելում
են իրենց երջանկութիւնը Աստուծոյ կամքի համա-
ձայն — նախախնամութեան կանխորոշմամբ: (Ես.
Խ. 5 — 14 ԽԴ. 21 — 28 Եր. ԽԳ. 10 — 13 Իէ.
1 — 6):

6. Մարզարէական գրուածքների ժամանակա-
գրութիւնը.

Աստուածաշնչի մեր թարգմանութեան մէջ
մարդարէական գրքերի եղած կարգը չէ համա-
պատասխանում նրանց ժամանակագրութեանը.
այդ կարգով չեն գրուած, ինչ կարգով որ գրուած
են: Այդ կարգը տարբեր է զանազան թարգմա-
նութիւնների մէջ և չէ համապատասխանում
բնագրին: Եօթանասնից թարգմանութեան մէջ
առաջին տեղը գրուած են 12 փոքր մարդարէ-
ները: Վուլգատայի*) թարգմանութեան մէջ, ինչ-
պէս նաև այնուհետև եղած թարգմաննութիւնների
մէջ, Եսայի մարդարէն գրուած է առաջին տեղը,
անշուշտ այն պատճառով, որ այս մարդարէն

*) Վուլգատա-Աստուածաշնչի լատինական թարգ-
մանութիւնն է, կատարած Հերոնիմոսի ձեռքով, Դ.
դարում:

պարունակում է Փրկչի մասին ամենապարզ
գուշակութիւններ:

Մարգարէականքարողութիւնն ամենից առաջ
սկսել է Յնանը, Խրաէլացոց Յերբովում Ա-ի
ժամանակ մօտ 836 թուին Ք. առաջ. այնու-
հետև, Յուղայի Ողիա, Յովաթան, Աքաղ և
Եղիկիա թագաւորների ժամանակ, մարգարէացել
են՝ Յովէլ, Ովսէ, Եսայի, Ամովս, Արդիու, Մի-
քիա և Նաւում մարգարէները. Ամբակումը մար-
գարէացել է Ամասիայի ժամանակ, Դանիէլն ու
Եղեկիէլը՝ Բարելօնի գերութեան ժամանակ:

7. Մարգարէական ներշնչումը.

Երբ այս կամ այն անձնաւորութիւնը ստա-
նում էր մարգարէական շնորհ, երբ մէկը դառ-
նում էր մարգարէ, նշանակում էր Աստուծոյ
կողմից քարոզիչ, ժողովրդին դարձի բերող՝ նա-
շարունակ չէր մնում այդ կոչման մէջ, նրա
մէջ մարգարէական ողին միշտ չէր դոր-
ծում, այլ այն ժամանակ, երբ Աստուծ
կամենում էր, երբ նրա մարգարէանալը
—նրա ծառայութիւնը հարկաւոր էր հայրե-
նիքին: Այնպէս որ մարգարէական ողին նրա
մէջ չէր գործում անընդհատ, այլ երբեմն
երբեմն: Ինչպէս օրինակ քամին մի տեղ միշտ

չէ փչում, այլ լինում է ժամանակ, որ փչում
է, ապա հանգարաւում, այդպէս էլ Աստուծա-
յին հոգին—շնորհը, Ս. Հոգին, մարգարէի միտքը,
նորա սիրտը և զգացմունքը լուսաւորում էր որոշ
ժամանակ, որոշ շրջանում, այնուհետև այդ ո-
գերութիւնը, մարգարէի այդ ներշնչող ողին,
այդ մաքուր յուզմունքն անցնում էր:

Նոքա Աստուծածային այդ կայծը ստանում
էին թէ արթուն և թէ քնած—երազի ժամանակ
(Դան. է. 1. 2. Ը. 1), թէ կապանքի մէջ (Եր. ԼԳ.
1), խրախճանի և ուրախութեան ժամանակ (Գ.
Թագ. ԺԳ. 20), թէ առանձնութեան (Երեմ. ԻԸ.
11. 12) և թէ կողմնակի մարգկանց ներկայու-
թեամբ (Եղ. ԺԸ. 1), թէ դաշտում (Եղ. Լէ. 1) և
թէ մասնաւոր մի արեստաւորի (բրուտի) տանը
(Եր. ԺԸ. 1): Այս բոլոր ժամանակ և ամեն տեղ՝
մարգարէական շնորքը, յանկարծակի տիրելով
իրեն ենթարկուողի սիրտն ու հոգին, կարողանում
էր դարձնել նրան ընդունակ և արժանաւոր որոշ
ծառայութիւններ կատարելու. այնպէս որ ուրիշ
որեէ բան, մարգկային որեէ զբաղմունք կամ
մտածմունք, մինչեւ իսկ սպառնալիք, անկարող
էր խոշընդոտ հանգիսանալ Աստուծածային հոգու
թէ ներգործութեան և թէ գործունէութեան:

8. Ի՞նչ ձետվ էին մարգարէները հրափրտմ։

Աստուած ուղղակի կանչում էր, ով այս ինչ, ես քեզ մարգարէ եմ՝ նշանակում և դու պէտքէ անես այս, այս։ Աստուած մէկին ուղարկում էր միւսի մօտ և ասում, գնա այս ինչին ասա և նա կլինի մարգարէ (Ահարոն)։

Մարգարէները երեխն իրենց աչքերով տեսնում էին զանազան տեսիլներ. օրինակ Եսային տեսաւ Տիրոջը բարձրութեան(իշխանական)աթոռի վրայ նստած, շրջապատուած բազմաթիւ սերովեներով, ինչպէս մեծ ժողովրդի մեծ թագաւոր իր մեծ փառքի վրայ. երեմիա մարգարէն տեսնում է ընկուզէ գաւագան, ի նշան այն բանի, որ իր գուշակութիւնները շուտ պէտքէ իրականանան։ Եղեկիէլը իր կանգնած տեղը—դաշտը տեսնում է լցուած մարգարյին ոսկորներով, մարգարէն նկատում էր, թէ ինչպէս մարգարյին էակներ այդ ոսկորներից վերակենդանանում էին, ի նշան Յուգայի թագաւորութեան վերակենդանութեան (Եղ. կ. 1-12)։ Դանիէլը երազում տեսաւ մի մեծ ծով, չորս կողմից փչում էր քամի, այդ ալեկործ և յուղուած ծովից դուրս եկան իրարից հզօր, իրարից ամենի 4 գաղաններ, ի նշան իրար յաջորդող բարելացոց, պարսից, յունաց կամ մակեդոնացոց և ասորոց թագաւորութեանց (Դան. կ. 1-7)։

Երբ մարգարէները ստանում էին այս շնորհը, Աստուածային կրակը «վասուած էր նոցա սրտի ու սսկը մէջ», նոքա անկարող էին լինում հանդարառուել. «Ասիւծ գոչեսցէ և ով իցէ, որ ոչ սարսիցէ. Տէր Աստուած խօսեցաւ, ով իցէ, որ ոչ մարգարէացի»(Ամովս Գ. 8)։ Զնայելով Աստուածային ներշնչման այսպիսի հզօր և անյաղթելի ազգեցութեանը՝ մարգարէները պահպանում էին հոգեկան գիտակցութիւնն ու մտաւոր կարողութիւնը։ Նոքա իրենց չէին կորցնում. Ենովայի մարգարէները այս հանգամանքով տարբերում էին հերթանոս մարգարէներից։

9. Մարգարէութիւնները ժողովրդին հաղորդելու միջոցները։

Մարգարէները իրենց մէջ գործող Աստուածային ողու ներշնչումը ժողովրդին յայտնում էին նաև ըանաւոր կերպով, քարոզներով և ճառերով։ Եթէ մարգարէութիւնը վերաբերում էր ամբողջ ժողովրդին—ընդհանրութեան, այդ դէպքում մարգարէն յայտարարում—ասում էր Աստուծոյ տաճարում կտմ ժողովարանում. «կաց իդրան տանն տեառն և ընթերցիր անդ զբանս և ասասցես լուարուք զբանս Տեառն ամենայն հրէաստան, որք մտանէք ընդ դրունսդ ընդ

այսոսիկ՝ երկիր պարզանել Տեառն» (Եր. է. 2): «Լուարուք զբան որդիք Իսրայէլի» (Ովս. Դ. 1): Եթէ Աստուծոյ կամքը կամ հրամանը մարգարէութեան ձեռվ հարկաւոր էր յայտնել քահանային կամ թագաւորին, որևէ իշխանին կամ որևէ քաղաքացուն, այդ գէպքում մարգարէն յայտնում էր պալատում, այն իշխանաւորի պաշտօնավայրում, որին վերաբերում էր մարգարէութիւնը և առանց քաշուելու յայտնում: «Լուարուք զայս քահանայք» (Ովսէ Ե. 1) «Երթ և էջ ի տուն թագաւորին Յուդայ և խօսեսցիս անդ զբանսդ զայդ» (Եր. Իթ. 1):

Յովսան մարգարէն ուղարկուում է Նինուէացոց մօտ: Եզիկիէլը — Քորար գետի ափի բնակիչների մօտ, իսկ Երեմիա մարգարէն ուղարկում է Եղոմայոց, Ամոնացոց, Մովաբացոց, Տիւրոսի, Սիդոնի և Յուդայի Սեղեկեա թագաւորների մօտ. գնում և յայտնում էր Աստուծոյ կամքը, թէ ես իմ իշխանութեամբ և իմ հզօր ձեռքով ստեղծեցի երկինքն ու երկիրը, մարդիկ, անասուններ և թէ ամեն ինչ, ինչ որ երկրի վրայ կայ, և այդ ամենը ում որ կամենամ կյանձնեմ:

Երկրորդ՝ որպէսզի աւելի շատերին յայտնի լինի Աստուծոյ պատգամը և որպէսզի երկար ժամանակ և իսկութեամբ պահպանուի ժողովր-

դի մէջ, մարգարէները իրանց խօսքը յայտնում էին զրատոր:

Բարուքը Երեմիայի բերանից զրում է Աստուծոյ պատգամը և տանում ժողովրդի առաջ կարդում տաճարում (Եր. լ. 9. 1—6): Եւ երբ Յուդայի Յովակիմ թագաւորը այրել տուաւ Երեմիայի այդ զրաւոր մարգարէութիւնը, Աստուծած հրամայեց նորից զրել և յայտնել թագաւորին (Եր. լ. 9. 27—32):

Երեմիան զրել է Յուդայի գաղթականներին (Եր. Իթ. 1, 2), իսկ Բաբիլոնի մասին գուշակութիւնը զրի առաւ, ուղարկեց թագաւորի մարդկանցից մէկի ձեռքով և հրամայեց, որ նախ կարդայքաղաքի ամբողջ ժողովրդի առաջ և ապա քար կապէ այդ զրութեան մէջ և ձգէ Եփրատ գետը ի նշան այն բանի, որ Բաբելոնն էլ այդպէս կընկղմուի (Եր. ԾԱ. 60—63): Մարգարէութեան այս զրաւոր ձեր գործածական էր մանաւանդ Ողիա թագաւորից մինչև Նէմիի մահը (836—408):

Երրորդ՝ Մարգարէները իրենց պատգամները յայտնում էին և այլարանական — խորհրդաւոր նշաններով կամ գործողութեամբ: Այսպէս եսայի մարգարէն մի մեծ մագաղաթի վրայ գրեց «մագէր-շէլալ-խաղ-բազ» — (արագ-արագ զաւար հարկանել և վաղվաղակի զապուռ ժողովել

այսինքն՝ շտապում են աւարի, վազում են կողոպտելու. և մարգարէն իւ նորածին զաւակին էլ անուանեց, մարգէր-շէլալ-խազբագ — շտապում են աւարի, վազում են կողոպտելու, ի նշան այն բանի, որ Խալդերը պէտքէ արշաւեն Աենեքերիմի առաջնորդութեամբ գեռ Իսրայէլի և ապա Յուդայի վրայ, պէտքէ աւերեն, գերի և աւար տանեն (Ես. Բ. 1, 2, 3):

Եսայի մարգարէն քուրձն ու հողաթափը հանած մերկ ու բորիկ ման եկաւ, իշնան այն բանի, որ Ասորեստանի թագաւորը Եգիպտացիների և Եթովպացիների, ծերերին և երիտասարդներին մերկ ու բորիկ գերի կտանի (Ես. Ի. 1—6). Երեմիա մարգարէն իր նոր ծածկոցը Տիրոջ հրամանով տանում թագում է Եփրատի ափին. որոշ ժամանակ անցնելուց յետոյ հանում, արդէն փթած, ինչան այն բանի, որ Յուդայի և Երուսաղէմի հպարտութիւնն այդպէս պէտք փարի և փշանայ (Եր. ԺԳ. 1—11): Նոյն մարգարէն ժողովրդի ծերերի ներկայութեամբ, Աստուծոյ հրամանով, մի կաւէ կուժ կոտրում, փշուր-փշուր է անում. ի նշան այն բանի, որ Երուսաղէմն էլ այդպէս քարուքանդ կլինի (Եր. ԺԹ. 1, 2, 10, 11):

Եգիպէլ մարգարէն աղիւսի վրայ նկարում է Երուսաղէմ քաղաքը, գծում է շրջապատ,

ի նշան քաղաքի պաշարման: (190 օր աջ կողքի վրայ է պառկում, 40 օր ձախ) վարում է չարքաշ կեանք, ի նշան այն բանի, որ բարելացիք պէտքէ պաշարեն Երուսաղէմ քաղաքը և նրան շատ պէտքէ նեղը լծեն:

1864-63

Ովսէ մարգարէն Աստուծոյ հրամանով ամուսնանում է ամենափչացած կնոջ հետ, ի նշան այն բանի, որ Իսրայէլն էլ այսպէս փչացած է, և իր որդոցը անուանում է Զողորմեալ, Ոչժողովուրդ, այսինքն Աստուած Իսրայէլին չէ ողորմում և իր ժողովուրդ չէ համարում, որովհետեւ նոքա Աստուծոյ օրէնքն ու ճանապարհը թողած՝ հեթանոսական կեանք են վարում (Ովսէ Ա. 1—9): Այսպէս այլաբանական խորհրդաւոր նշաններով եղած մարգարէութեանց նշանակութիւնները, իսկոյն հէնց իրենք մարգարէները բացատրում էին ժողովրդին:

ԿՐԻՆՈՒԹԵԸՆ ՀԵՄԱՅԻ.

1. Մարգարէ. տեսանող. նաբի:
2. Մարգարէների գերը:
3. Մարգարէութեան գլխաւոր առարկան:
4. Մեծ և փոքր մարգարէներ:
5. Կանոնական և պարականոն մարգարէական գրուածքներ:



6. Եօթանասնից, Հայկական և Վուլգատասա թարգմանութիւն:
7. Մարգարէական գրուածքների բովանդակութիւնը:
8. Մարգարէական գրուածքների ժամանակագրութիւնը:
9. Մարգարէական ներշնչում:
10. Ի՞նչ ձևով էին հրաւիրւում մարգարէները:
11. Մարգարէութիւնները ժողովրդին հաղորդելու միջոցները.—
 - ա. բանաւոր
 - բ. գրաւոր
 - գ. խորհրդաւոր նշաններ կամ գործողութիւն:



ՄԱՐԳԱՐԵՆԵՐ

Ա. ԵՍԵՅԻ ՄԵՐՊԵՐԻ

(805 – 716)

1. Տեղեկութիւններ Եսայի մարգարէի մասին.

Եսայի մարգարէն Ամովսի որդին էր։ Շատերը կարծել են, որ սորա հայրը 12 փոքր մարգարէներից եղած Ամովսն է. բայց սխալ է այդ կարծիքը, որովհետեւ Եսայի մարգարէն իշխանական ցեղիցն էր, նորա ցեղից եղել են Յուղայի թագաւորներ (Դ. թագ. ԺԴ. 1), մինչդեռ Ամովս մարգարէն հասարակ ծագումից էր. նա հովիւ էր, ուրիշների ոչխարներ էր արածացնում և թութ թափում։ «Ես ոչ մարգարէ էի և ոչ որդի մարգարէի, այլ հովիւ էի և թութ քաղէի» (Ամ. Է. 14)։ Եսայի մարգարէն, ինչպէս տեսանք, իր գուշակութիւնները աւելի հականալի դարձնելու համար, գործ է ածում այ-

լաբանական խորհրդաւոր նշաններ, խօսքեր,
դարձուածքներ, պատկերաւոր բառեր. և մարդա-
րէն այդպէս յայտնելուց յետոյ՝ անմիջապէս
բացատրում է ունկնդիրներին. օր. սիրելի այգու
մասին եղած երգը (կարդալ բնագիրը Ես. Ե.):
«Արագ-արագ զաւար հարկանել և վաղվաղակի
զապուռ ժողովել» (Ես. Լ. 14.) այսինքն շտա-
պում են աւարի, վաղում են կողոպտելու (մա-
գէր-շէլալ-խազ-բազ) իր որդուն էլ այդպէս ան-
ուանեց, ցոյց տալու համար Սենեքերեմի ար-
շաւանքը: Քուրձը ձգեց վրայից, հողաթափները
հանեց ոտից, մերկ ու բորիկ ման եկաւ ի նշան
այն նախատինքի, որ կրելու են Եղիպատացիներն
ու Եթովպատացիները Ասորեստանի թագաւորի
ձեռքով (Ես. Ի. 1-4):

Եսայի մարդարէի աղօթքով Եղեկիա թագա-
ւորը Երուսաղէմը պաշարող Ասորեստանի մեծ
զօրքը կոտորեց (Ես. Լէ. 4. Լ. 9.) և թշնամին
ամօթահար յետ դարձաւ: Եսայի մարդարէն ապ-
րեց մինչև Յուղայի Մանասէ թագաւորը (716
661), որի հրամանով սղոցի տանջանքի ենթարկ-
ուելով նահատակուեց խորին ծերութեան հա-
սակում:

Եսային բացի իր մարդարէական գրքից,
գրել է նաև Ոզիա թագաւորի գործերի մասին,
բայց այս գրուածքը մեզ չէ հասել: Հին հրէա-

կան մի աւանդութեան համաձայն, Եսայի մար-
դարէն հաւաքել և կարգի է բերել Սողոմոնի
Առակաց գրքի վերջին 6—7 գլուխները:

2. Երկու քաղաքական եւ կրօնական վիճակը
Եսայի մարզարէի ժամանակ.

Մարդարէների հանդէս գալը առհասարակ
սերտ կապ ունէր Իսրայէլի ժողովրդի կրօնական
և քաղաքական գրութեան հետ: Երբ ժողովուրդը
բարոյապէս ընկնում էր, երբ իսրայէլացիները
Եհովային թողած՝ հեթանոսական աստուածների
ետեկցն էին ընկնում և քայլայւում էր Իսրայ-
էլի կեանքը, երբ միենոյն ժամանակ հարեան
այս կամ այն ազգը զօրանալով զբաղւում էր
աշխարհակալութիւններով, ահա երկրի սրտացաւ,
ազգասէր անհատներից Աստուած ընտրում էր
մարդարէներ, ուղարկում իր ժողովրդի մօտ
դարձի բերելու և ապագայի գալիք արհաւերքի
հանդէպ պատրաստելու: Այդպէս է և Եսայի
մարդարէն Յուղայի երկրում: Սա մարդարէա-
ցել է Յուղայի Ոզիա, Յովաթամ, Աքազ և Եղե-
կիա թագաւորների ժամանակ:

Իսրայէլի բաժանուած թագաւորութիւննե-
րից Իսրայէլը արդէն քայլայուել—թուլացել իր
կորստեան էր գիմում: Զբաղուած էր քաղաքա-

կան պատերազմներով, որոնք աղէտալի եղան նրա համար. երկիրը ոչ միայն քաղաքականապէս թուլացաւ և կործանման դիմեց, այլ և կրօնապէս—բարոյապէս սոսկալի դրութեան մէջ ընկաւ. Այսպէս հէնց Յերօբովամ թագաւորից նկատելի էր, որ Իսրայէլի երկրում միենոյն եհովայի օրէնքը չէր իշխում և նորա պաշտամունքը չէր տարածուած երկրում. Ոչ միայն հեթանոսական սովորութիւնները մուտք գործեցին Իսրայէլի մէջ, այլ և սկսեցին կուռք պաշտել և այդ աստուածներին զոհ մատուցանել: Երկրում շատացան հեթանոսական կուռքերը, ունեցան հեթանոսների նման պատերազմի, խաղաղութեան, քամու, լեռների, գաշտերի, հօտերի, պտուղների և այն և այլն աստուածներ: Ղետացիների փոխարէն յառաջ եկաւ քուրմական դասակարգ, որը անշուշտ չէր կարող ժողովրդին առաջնորդել դէպի բարեպաշտութիւն: Երկրի թագաւորներն անդամ սկսան կուռք պաշտել. Աքար թագաւորն ամուսնացաւ Սիդօնի թագաւորի աղջիկ Յեղաբելայի հետ:

Ահա այսպէս էր Իսրայէլի թագաւորութեան կրօնական վիճակը. իսկ Յուդայի թագաւորութիւնը. այստեղ Դաւթի ցեղը դեռ իշխող էր և հեղինակաւող. Երուսաղէմ մայրաքաղաքը հա-

րուստ էր և կազմում էր Յուդայի քաղաքական ու կրօնական կենդրունը:

Իսրայէլը ընկնելով՝ Յուդայի երկիրը թէև սկզբում ազատ էր հեթանոսական սովորութիւններից, ծէսերից ու կուռքերից, թէև մայրաքաղաք երուսաղէմը դեռ մնացել էր միմիայն Եհովայի պաշտելու վայր, բայց շուտով, թագաւորութեան բաժանումից հազիւ 50—60 տարի անց, Յուդայի 5-րդ թագաւոր Յովամը բարեկամական կապ հաստատեց արդէն հեթանոսացած Իսրայէլի թագաւոր Աքարի հետ և ամուսնացաւ նրա աղջկայ հետ: Այդ օրուանից Երուսաղէմի թագաւորների և Սամարիայի մէջ ըսկուեց մտերմական յարաբերութիւն:

Յուդան այս նորանոր դաշնքներով թէ Իսրայէլի և թէ սրանց բարեկամ հարևան հեթանոս ազգերի հետ, խախտեց իր մէջ եղած ձըշմարիտ պաշտամունքը, ամենուրեք իշխեց հեթանոսական հայեացքը, բարքն ու սովորութիւնը: Իսրայէլի նման Յուդան էլ պապական կրօնը չէր ընդունում իբրև իբրէն գոյութեան էական պայմանը, այլ ընդհակառակը Մովսիսական օրէնքը արհամարհանքի մատնուեց. ժողովուրդը ըսկաւ կուռքերին զոհ մատուցանել: Այս, Յուդան պահպանեց Մովսիսական կրօնի արտաքին մասը, զոհը, ծէսը, պաշտամունքը, բայց

այդ բոլորը մնաց լոկ իբրև սովորութիւն, ծէս՝
առանց ներքին իմաստի, առանց ներքին բովան-
դակութեան։ Առաջ, Մովսիսական օրէնքը որ մի
բարոյական կապ էր Աստուծոյ և ժողովրդի մէջ,
այժմ կորցրեց իր նախկին կրթական-դաստիա-
րական նշանակութիւնն ու հմայքը։ Աստու-
ծոյ խոստումը մնաց միայն ձեւական, և ոչ Յու-
դայի մտքի և սրտի զբաղման առարկայ։ Կրօ-
նական—բարոյական այսպիսի ողբալի վիճակի
վրայ մեծ ազգեցութիւն էր ունենում այն հան-
գամանքը, որ Յուդան ստիպուած էր երբեմն
այս, երբեմն այն, մինչև իսկ երէկուայ թշշ-
նամի հեթանոս ազգի հետ բարեկամական դաշն
կապել, միւսից ազատուելու համար։ Այսպիսով
թուլացաւ Ենովայի հաւատքը։

Եսայի մարգարէի ժամանակ Յուդայի եր-
կրի ամենազլխաւոր թշնամիներն էին սկզբում
սիւրիացիք, իսկ յետոյ Ասորիքն ու Բաբելոնը։
Վերոյիշեալ թշնամիների հանդէպ եզիպտոսը հա-
մարտում էր Յուդայի պաշտպան։ իսկ միւս հարե-
ւան ազգերը—ամազեկացիք, մովաբացիք, եղո-
մացիք, որոնք Դաւթից սկսած Յուդային հպա-
տակ և ստրուկ էին եղած՝ այժմ այս կամ այն
թշնամու հետ միանում էին ի վեաս Յուդայի։
Ահա այս էր Յուդայի քաղաքական դրութիւնը
Եսայի մարգարէի ժամանակ։

3. Եսայու մարգարէական կոչումը.

Սրտացաւ, ազգասէր, երկրի բարեկեցու-
թեան նախանձախնդիր մարդիկ միայն ցաւ ու
կակիծ կարող էին զգալ ժողովրդի այս ողբալի
վիճակը տեսնելով. իսկ Ենովան, Իսրայէլի ժո-
ղովրդի Աստուծը, չէր կարող անտարբեր մնալ
իր վաղեմի ժողովրդի այս մոլորութեան հան-
գէպ. բարկութեամբ էր լցուել դէպի նա և սու-
կալի պատիժներ պատրաստել նորա համար. և
ահա իր կամքն ու իր պատուէրը ժողովրդին
յայտնելու համար ընտրում է Ամովսի որդի
Եսայուն մարգարէ։

Ինքը մարգարէն իր մարգարէական կոչումը
պատմում է իր գրքի Զ. զիլսում. «Տեսի զՏէր
նստեալ յաթոռ բարձրութեան և լի էր տունն
փառք»։ Նա տեսնում է Ենովային տաճարում,
շրջապատուած սերոբէներով։ Աստուած մար-
գարէին յայտնում է ժողովրդի թշուառ կացու-
թիւնը. «Թանձրացաւ սիրտ ժողովրդեանդ, ա-
կանջօք իւրեանց ծանունս լուան և զաշս իւր-
եանց կապուցին» (Զ. 10)։ Սրտացաւ Եսային
զիմում է Տիրոջը. «մինչև յերբ Տէր» մինչև
Երբ պէտքէ այս թշուառութեան մէջ լինին,
միթէ դրանց համար փրկութիւն չի լինի։ Ենո-
վան մարգարէին պատուիրում է գնալ իւր ժողո-

վրդի մօտ իբրև իւր—Եհովայի պատգամաւոր՝
յայտնելու նրանց Տիրոջ կամքը։ Մարգարէն
պէտքէ գնայ ժողովրդին մի սոսկալի պատգամ
յայտնէ. «Աւերեսցին քաղաքք ի բնակչաց և տունք
ունայնացին առ ի չգոյէ մարդկան և մնացէ
երկիրդ աւերակ. տարագրեսցէ Աստուած
զժողովուրդն», բայց այնուամենայնիւ այդքան
փուչ և ապականուած բազմութեան մէջ «մնա-
ցեալք տասանորդեսցին և դարձեալ եղիցին ի
գերութիւն և յափշտակութիւն, իբրև բեեկնի և
իբրև զկաղին թօթափեալ յիւրաքանչիւր պատե-
նից. զաւակ սուրբ արձանութիւն նորա» (Ես.
Զ. 13):

Մարգարէն գուշակելով Աստուածային սոս-
կալի պատուհասը, միենոյն ժամանակ յայտնում
է, որ ժողովրդից կփրկուի մի փոքրիկ մնացորդ.
ահա մարգարէի գերը—փրկութեան յոյս Եհո-
վային հաւատարիմ մնացողներին, իսկ մոլորուած-
ներին սոսկալի վախճան:

Եսային չէ քաշւում և չէ դադարում մե-
ծամեծներին դատել այն չափով, որքան պահան-
ջում է Եհովայի արդարութիւնը։ Նա ներշնչում
է իւր ժողովրդին, որ նա ժամանակի չարիքնե-
րի վրայ նայէ իբրև մի խրատի վրայ։

4. Եսայի մարգարէութեան զիսատր առարկան։

Եսայի մարգարէի գուշակութիւնների մե-
ծագոյն մասը վերաբերում է Հրէաստանին
(Յուղային) և երուսաղէմին (Յուղայի մայրա-
քաղաք): Իր քարոզութեան նիւթը Յուղայի եր-
կիրը գարձնելով շօշափում է նաև այն երկիր-
ների և ժողովուրդների (Բարելացիների, Մովա-
բացիների, Դամասկոսի) կեանքը, որոնք պէտքէ
Յուղայի երկիրը աւերէին ու ժողովրդին գե-
րէին։ Եգիպտոսի, Արաբիայի, Տիւրոսի և Փիւ-
նիկէի կատարած գերը Յուղայի նկատմամբ:
Գուշակում է կիւրոսի փառաւոր յաղթութիւն-
ները, Յուղայի ազատութիւնը գերութիւնից.
մարգարէանում է ամբողջ մարդկութեան ազա-
տութիւնը չարի իշխանութիւնից և Աստուծոյ
թագաւորութեան հաստատուիլը երկրիս վրայ՝
Փրկչի միջոցաւ։

5. Եսայի մարգարէութեան առանձնայատկու-
թիւններն ու նշանակութիւնը.

Միւս բոլոր մարգարէներից Եսային տար-
բերում է Յիսուսի մասին պարզ և գեղարուես-
տօրէն մանրամասն գուշակութիւններով. ոչ մէկը
մարգարէներից այնքան մանրամասն և պարզ

գուշակութիւն չէ տուել Փրկչի և Նըա հիմնուել լիք թագաւորութեան մասին, որքան Եսայի մարգարէն: Եկեղեցու հայրերը նրան, մինչև անգամ անուանում են աւետարանիչնա այնքան մանրաման է նկարագրում, որ կարծես գրում է ներկան և ոչ թէ գուշակում ապագան: Իբրև իշխանական ծագումից, իբրև բարձր շրջանի մարդ Եսայի մարգարէն քարոզում—գուշակում է գեղեցիկ, պարզ, մշակուած, հարուստ և բարձր լեզուվ: Նորա ճառերի մէջ չէք գտնի կոպիտ և ուամկական ոճ կամ դարձուածք. նա իր մարգարէութիւնն արտայայտում է ամենաընտիր ոճով, ամենասքանչելի առակներով և երգերով:

Եսային աշխատում է արդարների մի համայնք կազմել, որը պէտքէ լինի ապագայ հարայէլի արմատը: Շնորհիւ Եսայի մարգարէի, Յուղայի թագաւորութիւնը չէ հասնում այն տխուր վախճանին, որին արժանացաւ հարայէլի թագաւորութիւնը. մինչ գեռ այս զօրեղ տէրութիւնը կորստի անդունդն է զլորուում, Յուղայի փոքրիկ թագաւորութիւնը՝ մնում է կանգուն, աւելի քան 100 տարի: Եսայի մարգարէի գործունէութեան շնորհիւ հարայէլի հաւատը գէպի Եհովան այնպիսի հաստատուն արմատներ է ձգում, որ մինչև անգամ Երայական ժողովրդի գերու-

թիւնը և քաղաքական իշխանութեան անկումը չէ կարողանում այս հաւատքը արմատախիլ անել: Նորա ոգեսորուած քարոզների շնորհիւ Երուսաղէմը և յատկապէս տաճարը ստացաւ բացառիկ նշանակութիւն: Ժողովրդի մէջ այն հաւատը գոյացաւ, թէ Եհովան այդ տաճարի պատճառով ինայեց Երուսաղէմին և ուրեմն Յուղային:

6. Եսայի մարգարէութեան մասերն ու ըովանդակութիւնը.

Եսայի մարգարէի գրուածքը ըստ բովանդակութեան բաժանուում է 2 մասի.

Առաջին մասում մարգարէն նկարագրում է ժողովրդի տղիտութիւնը, անհոգութիւնը դէպի օրէնքը, նրանց հպարտութիւնը, ինքնավտահութիւնը, արհամարհանքը և ձնշում որբերին ու տնանկներին, խարեբայութիւն, անարդարութիւն, կուապաշտութիւն: Այս մասը գտնուում է Ա. զլիսից մինչև ԼԹ-ի վերջը. ժողովրդի այդ ամեն տեսակի յանցանքները նկարագրուած են համարեա վերոյիշեալ գլուխներում տւելի կամ պակաս չափով:

Երկրորդ Խ. զլիսից մինչև գըքի վերջը, ուր մարգարէն քարոզում է ապաշխարանք ամեն-

քին, թէ Յուղային և թէ մինչև անգամ հեթանոսներին, բոլորին աւետում է թողութիւն յանուն Փրկչի, որը պէտքէ չարչարուի մարդկութեան մեղքի համար և երկրիս վրայ կհաստատուի մի առանձին իշխանութիւն, որի գրօշակի տակ կիմքուին բոլոր ազգերը, ամենքը անխնտիր և կկազմեն Աստուծոյ թագաւորութիւնը:

Իսկ ըստ ժամանակագրական կարգի Եսայի մարգարէի գիրքը բաժանուում չորս մասի:

Առաջին Ողիա թագաւորի ժամանակ արտասանուած 3 ճառերը, որոնք ամփոփուած են գրքի առաջին 5 գլուխներում:

Ողիա թագաւորը պատերազմներ էր վարում Փիւնիկեցիների, Արաբացիների և Ամաղեկացիների դէմ. ունէր 307,500 կանոնաւոր զօրք. Ճեռք բերեց մեծ փառք, զօրքի և պատերազմների համար վատնեց երկրի հարստութիւնը:

Մարգարէն իր առաջին ճառի մէջ երկինքն ու երկիրը վկայ է կանչում, Յուղային յիշեցնում է, որ տարուած է իր պատերազմական յաղթութիւններով, զինուրական մեծամեծ պատրաստութիւններով՝ մոռանում է իր Տիրոջը, իր բարերար հօրը: (Բ. մնց. Իջ. 16.) Նորատիսմար են եղից ու իշից էլ, որոնք գիտեն – ճանաչում են իրենց տիրոջն ու մսուրը, իսկ Յուղան օր օրի վրայ իրեն շաղախում է յան-

ցանքների մէջ. ոտից մինչև գլուխ «չիք ի նմա առողջութիւն» (Ա. 6), Ծանեաւ եղն զստացիչ իւր և էշ զմսուր տեսան իւրոյ և իսրայէլ (Յուղա) զիս ոչ ծանեաւ» (Ա. 3.):

Երկրորդ մարգարէական ճառը (Բ. Գ. և Դ.) Եսայի մարգարէն ասել է Յուղայի և Երուսաղէմի մասին: Միայն Երուսաղէմն է անաղարտ մնացել Յուղայի մէջ, մարգարէանում է, որ «եկեսցենինա ամենայն հեթանոսք»: Մեսիան կդայ և այն Աստուածպաշտութիւնն ու արդարութիւնը, որ այժմ միայն Մօռէա լերան վրայ է՝ կհաստատուի ամեն տեղ և կթագաւորի Աստուծոյ իշխանութիւնը – Քրիստոնէութիւնը: Մինչ այդ մեղաւոր Յուղան չարաչար կպատժուի, նկարագրուում է Տիրոջ գատաստանը, որից ոչ ոք չէ խուսափելու: Երկիրը կդառնայ աւերակ, աղքատացած, զրկուած իր ամեն փառքից ու վայելչութիւնից: Երկիրը ոչ միայն աւերակ կդառնայ այլ և կդատարկուի. մարդու սով կլինի «բուռն հարկանիցեն եօթն կին զառնէ միոջէ և ասիցեն. հաց զմեր կերիցուք և հանգերձ զմեր զգեցցուք, բայց միայն անուն քո կոչեսցի ի վերայ մեր. բարձ ի մէնջ զնախատինս մեր»:

Երրորդ մարգարէական ճառը կոչւում է սիրեցեալ այգու երգ. մի հիանալի այգի կարպարարտ տեղում. տէրը ցանկով պատեց, ձո-

գերով զարդարեց, մէջը տնկեց ամենաապնիւ խաղողի որթ, աշատարակ շինեց և մէջը հնձան պատրաստեց: Սպասեց տէրը, որ իր տնկած ու խնամած որթը խաղող բերէ, բայց փուշ տուաւ: Այսուհետև գառնացած սրտով Եհովան մարդարէի բերանով դիմում է. «դատ արարէք ընդ իս և ընդ այգի իմ»: Տէրը լինչպէս կվարուի այդ փշաբեր այգու հետ: Քարուքանդ կանէ ցանկը, կկործանէ պարիսպը, ամենքը ազատ կըմտնեն, կյափշտակեն և ոտի տակ կտան, ամեն ինչ «եղիցի ի կոխում»: Տէրը անուշագիր կթողնէ այդ այգին, ոչ կվարէ և ոչ էլ կփորէ. փուշ ու տատասկ կըումնի նրա մէջ և այդպիսով այդ գեղեցիկ այգին կդառնայ խոպան:

Մարգարէն բացատրում է այգու առակի իմաստը. խաղողի այգին նշանակում է Իսրայէլի թագաւորութիւնը կամ Հին Ռւխտի համայնքը, խել որթ սորեկը՝ Յուղայի թագաւորութիւնը, որին Եհովան պահում է առանձին խնամքով. բայց նրա մէջ (Յուղայի) Եհովան պաշտում է լոկ ձեր համար, վստահանում է իւր զօրութեանն ու հարստութեանը. յոյս է դնում կառքերի, երիվարների, ամրոցների և նաւերի վրայ, մինչև անգամ այն կուռքերի վրայ, որոնց Յուղան սկսել է պաշտել: Նոցա իշխաններն ու աստիճանաւորները խակ մարդիկ են, տէրութեան

գեկավարները շահախնդիր, ժողովրդին կորըստեան անդունդն են առաջնորդում: Նոցա բնակարանները լի են աղքատներից յափշտակած կայքերով: Դրա համար, Տէրը կանէ իր զատաստանը, Եհովայի բարկութիւնը կոչնչացնէ սրանց: Հեռաւոր օտար ժողովրդին (Ասորեստանին) նշան կտայ, Ասորեստանցիք կգան և Յուղայի ժողովրդին գետնին կհաւասարացնեն «և ոչ ոք իցէ, որ փրկեացէ զնա» (Ե. 29):

Երկրորդ մասը իր մարդարէական կոչումնէ ամփոփուած Զ գլխում, որը անցանք վերենում:

Երկրորդ մասը սկսում է զրքի է. զլիից մինչև ԺԴ-ի 27-ը: Այս մասում ամփոփուած են Աքազի ժամանակ արած գուշակութիւնները: Երբ Իսրայէլի թագաւորը Ասորեստանի թագաւորի հետ միաբանած Յուղայի վրայ արշաւեց՝ Աքազը չարաչար յաղթուեց: Մարգարէն խրախուսում է թագաւորին, որ նա իր յոյսը Աստուծոյ վրայ դնէ: Բայց Աքազը յուսահատուած ու թուլացած՝ անձնատուը է լինում իր թըշնամի Ասորեստանի թագաւորին: Չարաչար տուժում է ոչ միայն Յուղան, այլ և Ասորեստանի գաշնակից Իսրայէլը: Այս անմիթար օրերում Եսային մարգարէանում է հեռաւոր, բայց խաղաղ և երանելի ապագայի մասին, Երբ Դաւթի իշխանութիւնը վերստին նորդուում է, Երբ

թուլամորթ, եսամոլ և յուսաբեկ Աքազ թագաւորի փոխարէն գահ է բարձրանում նորան միանգամայն հակապատկերը, որի իշխանութեան ժամանակ տիրում է յաւիտենական խաղաղութիւնը:

Չորրորդ մասը զետեղուած է Եսայի մարգարէութեան ի՞Դ. գլխի 27 համարից մինչև գրքի վերջը: Այս մասը պարունակում է Եղեկիա թագաւորի ժամանակ արտասանած ճառերը:

Ինչպէս երկում է, Աքազի մահով և Եղեկիայի գահակալութեամբ, Եսայի մարգարէի ազգեցութիւնը սեծ կշիռ ստացաւ: Նոր թագաւորը մեծ ջանքեր գործ դրեց Աստուածաշատութեան զտման համար. ոչնչացրեց «բարձրութիւնները», աշէրները, որոնք սուրբ սիւներ էին: Սակայն այդ արտաքին վերանորոգութիւնները բաւական չէին վերանորոգելու և գտելու մարդկանց սրտերը, այնպէս որ Եսային յանուն Եհովայի ըստիպուած է քարոզել, որ նոցա արտաքին Աստուածաշատութիւնը առանց զղման և ճշմարիտ դարձի՝ անարժէք բան է:

Երկրի չորս կողմը—սահմանակից երկրները յուղում էին պատերազմներով, Եսայի մարգարէն Յուղայի փոքրիկ տէրութեան համար նշանաբան էր գրել խաղաղ մնալ և սպասել իրերի ընթացքին: Ժողովրդին ուղեց իր կրակոտ ճառը, թէ երկիրը հանգստութեան և խաղաղութեան է

կարօտ: Եղեկիա թագաւորին խորհուրդ է տալիս չխառնուել, չմասնակցել այդ պատերազմներին: Թագաւորի մօտ պատգամաւորութիւններ էր գալիս զանազան թագաւորներից առաջարկութիւն էին անում, դաշն կապել ընդդէմ մի ուրիշ, բայց Եսայի մարգարէն խորհուրդ է տալիս մերժել և միայն Եհովայից օգնութիւն խընդրել: Այդպէս էլ եղաւ. միառժամանակ Եղեկիան լսում էր մարգարէին, երկիրը խաղաղ մնաց:

Չնայելով Եսայու բոլոր յորդորանքներին Եղեկիան միացաւ Եղիպտոսի թագաւորի հետ ընդդէմ Ասորոց:

Վաղուց մարգարէն գուշակել էր մի սոսկալի դատաստան, Եղիպտոսոց թագաւորի օգնութիւնը չի աղատի (լ. 3, 15—17):

Եւ ինչ որ տարիներ առաջ գուշակել էր մարգարէն՝ բոլորը կատարուեց. Սենեքերիմն արշաւեց Պաղէստինի վրայ, ոտի տակ է տալիս մի քանի փոքր տէրութիւններ և մի զօրաբանակ ուղարկեց Երուսալէմի վրայ (701 թ.): Այս սոսկալի ճգնաժամին միայն Եսային էր, որ անվեհեր քաջութեամբ խրախուսում էր թագաւորին և ժողորդին չյուսահատուել, ի վերուստ օգնութեանը սպասել. յանուն Եհովայի կտրուկ կերպով յայտնում է, որ Սենեքերիմի զօրքը չէ կարող վերց-

նել այն քաղաքը, որ գտնւում է Աստուծոյ պաշտպանութեան ներքոյ:

Այս գէպքում եզեկիան լսում էր մարգարէին, նրանից խորհուրդներ էր հարցնում: Մարգարէն Աստուծոյ կողմից յայտնում է, որ չվախենան Ասորեստանցիներից, թշնամուն ետ կդարձնեմ այն ճանապարհով, որով եկել է: Թագաւորը, ժողովուրդը հաւատում են այս գուշակութեանը, յոյսը դնում ենովայի օգնութեան վրայ: Սուկալի վարակիչ հիւանդութիւնն ոչնչացնում է Սենեքերիմի զօրքը և նա ստիպուած է լինում յետ նահանջել առանց երուսաղէմն առնելու:

Տարիներ առաջ իսրայէլի 10 ցեղերը գերի էին տարուած եփրատիափը, Յուդայի մնացած 2 ցեղերին էլ նոյն վիճակն էր սպասում. ուրեմն, ամբողջ իսրայէլը գերութեան և թշուառութեան էր մատնուելու: Հայրենասէր Եսային չէ կարող հաշտուել իր ազգի ոչնչացման մտքի հետ: Յուդան կենսունակ է. Ենովան չէ կարող թոյլ տալ, որ ընդմիշտ անյոյս անցնի այդ ազգը. Նրա հետ դաշն ունի կապած և նրանից (Յուդայից) պէտք է ծագի ապագայում մարդկութեան յոյսը — Մեսիան: Ահա Եսային իր մարգարէական գրքի վերջին մասում կարիք է ըգում մխիթարել ժողովրդին, յուսատու քարոզներն արտասանել. Իսրայէլի (ընդհանրապէս) ա-

պագայ կեանքն է նկարագրում և նրանց վերջնական փրկութիւնը գուշակում: Այսպիսի բովանդակութեամբ Եսային ասել է մի քանի մարգարէական մխիթարական ճառեր:

ԿՐԿՆՈՒԹԵԸ ՀԱՄԱՐ

Եսայի մարգարէ

1. Կենսագրական տեղեկութիւններ.
2. Սորա ժամանակ իսրայէլի և Յուդայի քաղ.—կրօնական վիճակը.
3. Մարգարէի հանդէս գալու հանգամանքները
4. Մարգարէական կոչումը.
5. Եսայու մարգարէութեան նիւթը.
6. » » առանձնայատկութիւնները.
7. Մարգարէութեան մասերը, բովանդակութիւնը, յուսատու ճառերը.



Բ. ԵՐԵՄԻԾ ՄԸՐԴԱԾԻ

(647 - 602)

1. Տեղեկութիւններ Երեմիա մարգարէի մասին.

Հէնց իրա վկայութեամբ՝ Երեմիան Քեղկիա
քահանայի որդին է։ Մարգարէական պաշտօնի
կոչուեց պատանեկութեան հասակից, Խորայէլի
կործանումից 90 տարի յետոյ, Յուղայի Յոսիա
թագաւորի 13-րդ տարին, մօտ 646 թուին Ք. Ա.։
Այնունետև նա մարգարէացաւ Յուղայի յաջորդ
թագաւորների ժամանակ, մինչև Նաբուգոդոնո-
սորի արշաւանքները, Երբ արշաւանքներից ա-
զատուածների մի մասն Երուսաղէմից Եղիպտոս
դադթեց, դրանք իրենց հետ տարան և Երեմիա
մարգարէին։ Նա մարգարէ էր առնուազն 45
տարի, Յուղայի ամենախառն, թշուառ և ծանր
օրերում։

Նախորդ մարգարէների քարոզութիւններն ա-
նօգուտ չէին անցել. յառաջ էին բերել մարգարէ-
ական կուսակցութիւն, սկզբում ի հարկէ ընդու-

նելութիւն չգտաւ այդ կուսակցութիւնը, բայց
յետոյ Յուղայի Երիտասարդ Յոսիա թագաւորը
միացաւ նոր մարգարէական վերանորոգող կու-
սակցութեան հետ։ Երեմիայի համար շատ միի-
թարական էր թագաւորի այդ վերաբերմունքը։
621 թուին թագաւորին յայտնեցին, որ տաճա-
րում Մովսիսի գրած մի նոր գիրք է գտնուած,
որի մէջ գրուած էր, թէ Խորայէլը կփրկուի
միայն այն ժամանակ, երբ Եհովայի պատուի-
րանները կպահէ։

Թագաւորը ժողովրդին հրաւիրեց Երուսա-
ղէմ և հրամայեց այնունետև այդ պատուէրի հա-
մաձայն վարուեն, կործանել հեթանոսական տա-
ճարները, կուռքերը, արձանները, աշերները, սիւ-
ները, նրանց պաշտամունքներն ոչնչացնել և
պաշտել միմիայն Եհովային, որին Երկրպագել
միայն Երուսաղէմի տաճարում։ Այստեղ միայն
զոհ մատուցանել և այդ տաճարին տալ տասանորդը։

Այս բարեփոխութիւնն եղաւ շնորհիւ մար-
գարէների ջանքերի, բայց այդ փոփոխութիւնը
միմիայն ձեական էր և հիմնական բնաւորու-
թիւն չէր կրում. փոխուեց միայն պաշտա-
մունքը, բայց ոչ ժողովրդի սիրտն ու զգաց-
մունքը. մարգարէների ցանկացած կեանքի ներ-
քին բովանդակութեան փոփոխութիւնը չիրա-
կանացաւ։ Երեմիան չէր կարող գոհ լինել. այդ

չէր նրա ցանկացածը: Յուղան կարծում էր, թէ քանի ինքը Եհովայի օրէնքն ունի և նորա միակ ս. տաճարը՝ արդէն ապահով կարող է լինել, որ իրեն ոչ մի վտանգ չէ հասնելու: Այդպիսի վըստահութիւնն մի ցնորք է, ասում էր Երեմիան. ժողովուրդը ներքուստ չէ փոխուել. Յուղան կործանուած Իսրայէլից ոչ մի բանով աւելի չէ: Մի օր Երեմիան յայտնուեց տաճարում խըսնուած բազմութեան մէջ և սկսեց իր քարոզը. «Սնոտիապաշտ մի լինիք—ասում էր նա, մի ասէք, թէ մեզ մօտ է Եհովայի տաճարը. դուք գողանում էր, մարդասպանութիւն էք աշանում, սուտ երգում էք ուտում, օտար աստուածներին խունկ էք ծխում, և յետոյ գալիս էք այս տաճարը և ասում, Եհովայի տաճար, Եհովայի տաճար: Միթէ իմ անունով կոչուած տաճարը աւագակների որջ է: Ես էլ աչք ունիմ, ասում է Եհովան:»

Երեմիան առաջարկում է Երուսաղէմի բնակիչներին գնալ Իսրայէլի Ս. Աելով վայրերը տեսնել, թէ ի՞նչպէս նոքա աւերուած են. Եհովան կարող է նոյնպէս Երուսաղէմի հետ վարուել և Յուդային գուրս շպիտել Երկրից: Երեմիայի այս ճառն Աստուածահայիոյութիւն համարուեց և քիչ էր մնում քահանաների և ազգեցիկների բո-

ղոքի հիման վրայ՝ Երեմիային մահուան պատիժ տային:

Երեմիան որպէս ճշմարտութիւն աւետող, իբրև ժողովրդին իրենց յանցանքն ու ապօրինութիւններն ասող, յանդիմանող, ժողովրդի կողմից հալածանքի, արհամարանքի և յանդիմանութեան ենթարկուեց (Եր. Ի. 7.) «Եղէ ի կատականս... այպահնեալ». սպառնում էին սպանել, եթէ շարունակի մարգարէանալ: ԺԱ. 21:

Բայց Երեմիան չշփոթուեց. նա իր կեանքը ծաղրի և վտանգի ենթարկելով, Յուղային անբախտութիւն էր գուշակում: Հակառակորդները նրան բանտը դրին (Եր. ԻԳ. 2. ԼԱ.), մի քանի օր մինչև իսկ ցամաքած ջրհորի մէջ էին ձգել. (ԼԲ. 6):

Մարգարէն սկզբում իր ճառերը ժողովրդին յայտնում էր տաճարում բանաւոր. յետոյ Աստուծոյ հրամանով իր աշակերտ Բարուքին թելադրում էր իր գաղափարները, գրել տալիս և ուղարկում տաճար ժողովրդի առաջ կարդալու: Երբ Նաբուգոդոնոսորը քաղաքն առաւ և այրեց, հրամայեց իր զօրավարին ոչ մի վնաս չտալ Երեմիային. և երբ նրան առաջարկեցին մնալ Երուսաղէմում կամ գնալ Բաբելոն, նա գերադասեց մնալ Յուղայի քարուքանդ եղած Երկրում, թշուառացած հայրենակիցների հետ, քան թէ Եր-

Թալ ծաղկած Բարելոն (Եր. ի. 4): Եւ մնաց Ե-
րուսաղէմում, ահա այս դժբախտ օրերին Երե-
միան գրեց իր ողբը:

Նոր հալածանքի օրերին, Երբ Երուսաղէմից
բնակիչները գաղթեցին Եղիպտոս, Երեմիային
էլ զոռով իրենց հետ տարան:

Մարգարէն այնտեղ մեծ յարգանք էր վայ-
ելում թէ իր հայրենակիցների և թէ Եղիպտա-
ցիների մէջ: Երեմիան իր աղօթքով ազատել
էր Եղիպտացիներին կոկորդիլոսից և վլասսակար
գաղաններից: Այնտեղ մարգարէացաւ, որ Նա-
բուգողնոսորը կարշաւի Եղիպտոսի վրայ,
կառնի Երկիրը և կհաստատէ իր իշխանութիւնը:
Այդէս էլ եղաւ, Երուսաղէմի աւերումից հինգ
տարի յետոյ, Նաբուգողնոսորն արշաւեց Եղիպ-
տոս: Այդ ժամանակ Երեմիա մարգարէն արդէն
վախճանուած էր: Եղիպտոսում փառաւոնների
դամբարանում թաղեցին Երեմիային և Եղիպ-
տացիք սրբավայր գարձրին նորա գերեզմանը,
օձի և թունաւոր զեռունների կծածի համար
նորա շիրիմից հող էին վերցնում: Մինչև օրս էլ
աւանդաբար Գահիրէի մօտ ցոյց են տալիս մար-
գարէի գերեզմանը:

Աւանդութիւն կայ, թէ մարգարէն Եղիպ-
տական քուրմերին գուշակել է, որ նրանց կուռ-
քերը կկործանուեն, Երբ կոյս Աստուածածինը

իր զաւակով Եղիպտոս կգայ: Ահա այս գուշա-
կութիւնն էր, որ կատարուեց, Երբ Յսվաէփը
հրեշտակի հրամանով Բէթղէհէմից Եղիպտոս փա-
խաւ Մարիամի և նորածին Յիսուսի հետ (Մատթ.
ԺԶ. 14):

Բացի մարգարէական գրքից և ողբից Երե-
միային են վերագրում, որ պէտքէ գրած լինի
մի ողբ Յսիսա թագաւորի մահուան առթիւ. այս
գրուածքը Աստուածաշնչի մէջ չէ մտել և մեզ
չէ հասել:

Նրան են վերագրում նաև ԿԴ. և Ճ. ԼԶ.
սաղմոնները, ինչպէս նաև Գ. և Դ. թագաւորու-
թեան գրքերը, որովհետեւ այս գրքերի և իր մար-
գարէական գրքի մէջ շատ մեծ նմանութիւններ
կան, մանաւանդ Սեդեկայի թագաւորութեան
պատմութիւնը համարեա բառացի նոյնն է: (Եր.
ԾԲ. 1—34. Դ. թագ. իԴ. 18—25, 30):

2. Երեմիայի մարգարէութեան առանձնայատկու-
թիւնն ու նպատակը.

Երեմիա, մարգարէի գիրքը պարունակում է
իր մէջ գլխաւորապէս գուշակութիւններ Յու-
ղայի ժողովրդի թշուառութիւնների և Երկրուժ
պատահելիք մեծամեծ փոփոխութիւնների մասին:
Շատ մեկին կերպով ասել է, թէ Յուղայի, նրան-

սահմանակից որոշ թագաւորութիւնների աւել-
րակների վրայ կբարձրանայ Բարելոնը, և սա էլ
իր հերթին կկործանուի: 70 ամեայ գերութիւնից
յետոյ Յուղային խոստանում է վերադարձ հայ-
րենիք և բարեկեցիկ կեանք:

Իր մարդարէութիւնն սկսեց Իսրայէլի կոր-
ծանումից 90 տարի անց, Բաբելոնի գերութիւ-
նից 40 տարի առաջ, հէնց այդ Բաբելոնի զօրեղ
Նաբուպալասարների հարստութեան սկզբնաւո-
րութեան ժամանակ:

Յուղայի Մարտասէ և Ամօն անարժան թա-
գաւորների և կեղծ մարդարէների շնորհիւ
թշուառացած երկրի մօտալուտ արհաւիրքներ էր
գուշակում: Անխուսափելի էր Բաբելոնի արշա-
ւանքը և գերիշխանութիւնը. յայտնում էր, որ
պէտքէ զգուշանալ աննպատակ դիմավրութիւնից,
որից առաջ կդան աւելի մեծամեծ դժբախտու-
թիւններ (Եր. Իէ. 1—22):

Գուշակելով Եհովայի արդար դատաստանը,
մարդարէն այդ ամեն թշուառութիւնը իր սրտին
մօտ ընդունելով համարձակ արտայատում է
խիստ և կտրուկ, միենոյն ժամանակ վշտալի և
կարեկցող լեզուով: Պատուիրում է միշտ աղօ-
թել և միջնորդել մեղաւորների համար, թէկ Ե-
հովան միշտ էլ կասէ. «Դու մի կար յաղօթս ի
վերայ ժողովրդեանդ այդորիկ և մի խնդրեր

ի վերայ գորա զողորմութիւն. մի աղաչեր և
մի անկաներ առաջի իմ վասն գոցա. զի ոչ լսեմ
քեզ» (Ե. 16. ԺԱ. 14.): Խիստ է, անողոք և
անխնայ մարդարէի լեզուն, երբ խօսքը վերա-
բերում է ժողովրդին անբարոյականացնող և
կռապաշտ դարձնող մեծամեծ մարդկանց: «Գե-
րացան և պարարտացան և անցին զբանիւք
իմովք ի չարութիւն»:

Երեմիա մարդարէի գրուածքի մէջ աչքի է ընկ-
նում գանգատ իր մարդարէական կոչման ու
գործունէութեան գէմ, որովհետև իր այդ գու-
շակութիւններն անսպառ աղքիւր դարձան իր
թշուառութեան ու աղքատութեան. «Վայ ինձ,
մայր իմ, — բացականչում է մարդարէն — իբրև
զ՞ոք ծնար զիս. այր զատափետեալ և ձգեալ ի
դատաստան յամենայն երկրի. ոչ պարտիմ ինչ
և ոչ պարտի ոք ինչ ինձ. և զօրութիւն իմ պա-
կասեցաւ յանիծողաց իմոց» (ԺԵ. 10.:) «...եղէ
ի կատականս ... և ի թշուառութենէ զբողոք
բարձից, զի եղէ ինձ բանն Տեառն ինախատինս
և ի կատականս զօրհւնապազ» Ի. 8:

Այս բողոքները ցոյց են տալիս, որ մար-
դարէներից ոչ մէկը չենթարկուեց ընդհանուրի
այսպիսի ծաղը ու ծանակի, արհամարհանքի ու
հալածանքի, բայց և այնպէս ինքը իբրև ճշմար-
տութեան քարոզիչ, իբրև արդարութեամբ ու

ազնւութեամբ, հայրենասիրութեամբ բռնուած, վառուած ու ոգեսրուած, լոել չէ կարող, գիտէ, թէ իրեն ինչ է վիճակուած, բայց և այնպէս չքարողել, չգուշակել, չասել ամենքին ամեն ինչ, չէ կարող. իր ամբողջ էութեամբ տարուած է իր կոչմամբ:

Առանձնայատկութիւններից նկատելի է, որ Երեմիայի լեզուն այնքան բարձր, զարդացած ու գեղեցիկ չէ, ինչպէս Եսայի մարգարէի լեզուն. անշուշտ լեզուի պարզութիւնն ու աղքատութիւնն առաջ է գալիս այն հանգամանքից, որ Երեմիան հասարակ և աղքատ ծագումից է. իր ճառերի ու քարոզների նիւթը գարձնելով ժողովրդի փուչ, անբարոյական, ցոփ ու զեխ կեանքը, գործ է ածում ռամկական դարձուածքներ:

3. Երեմիա մարգարէի գրուածքի մասերն ու ըովանդակութիւնը.

Երեմիայի գիրքը բաժանում է ըստ ժամանակգրութեան 6 մասի. 1. մարգարէութիւն Յովիա թագաւորի ժամանակ 2. Յովակիմի ժամանակ 3. Սեղեկիայի ժամանակ 4. Երուսաղէմի կործանումից յետոյ արած գուշակութիւնը 5. Իր աշակերտ Բարուքին և հեթանոս ազգերին վերաբեր մարգարէութիւնները. Իսկ ըստ ըովանդակութեան բաժանում է 3 մասի:

Առաջին իր մարգարէական կոչումը հասարակութեան ծառայութեան համար (Ա. 1—19), որի մէջ մարգարէն յայտնում է իր ծագումը Յանօթափ գիւղի Քեղքիա քահանայից. իր մարգարէանալու ժամանակը Յովսիա թագաւորի 13-րդ տարին (627 թ.) Մարգարէն յայտնում է, որ ինքը այդ կոչման համար վաղուց, ի ծնէ որոշուած է եղել: «Մինչև ստեղծեալ էր զքեզ յորովայնէ գիտեմ զքեզ և մինչև ելեալ էիր յարգանդէ, արբեցի զքեզ. մարգարէ ի հեթանոս եղի զքեզ. (Ա. 4. 5.) (ինչպէս Պօղոս առաքեալը յորովայնէ էր ընտրեալ. Գաղ. Ա. 15.):

Երեմիան ուզում է հրաժարուել իր այդ կոչումից, առարկելով թէ ինքը դեռ փոքր է և խօսել չգիտէ, բայց Տէրը պատասխանում է, թէ նրանից պահանջում է ուշադրութիւն, որ լսէ իր խօսքը և յայտնէ ժողորդին. ում մօտ կուղարկի գնա և ինչ որ պատուիրի, նրանց ասէ: (Ա. 7.) «Մի երկիցես յերեսաց նոցա, զի ես ընդ քեզ եմ». Ա. 8: Այդ Աստուծոյ ներկայութիւնն է, որ միշտ ոգեսրում է ճշմարտութեան քարոզիչ Երեմիային: Մարգարէին երևում է 2 տեսիլ.

1) Տեսնում է ընկուզէ գաւազան ի նշան այն բանի, որ Ենովան չի ուշացնի իրազործել իր սպառնալիքները:

2) Տեսնում է մի կաթսայ, որը տաքանում,

եռում էր հիւսիսային կողմից. ի նշան այն բանի, որ հիւսիսի Ասորական և Բաքելական թագաւորութիւնները զօրանում էին և արշաւելու էին նաև Յուդայի Երուսաղէմի վրայ:

Ահա գալիք արհաւելրքները պէտք է Երեմիան յայտնէ Ենովայի կողմից, որ մարդարէին ոյժ և օգնութիւն է խոստանում. «Պնդեա զմէջ քո, արի և ասա նոցա զամենայն, զոր միանգամ պատուիրեմ քեզ. մի Երկիր յերեսաց նոցա». (Ա. 17.):

Երկրորդ մասն ամփոփուած է Բ. գլխից մինչև ԽԵ. գլուխր, որի մէջ նկարագրուած է մարդարէի գործունէութիւնը Յուդայի Երկրում: Այս մասումն են Երուսաղէմի կործանումից առաջ Երեմիայի արտասանած ճառերը, որոնց մէջ նախատեսնուած են Բաքելացիների արշաւանքները, որոնց կիետի քաղց, ժանտախտ, Երկրի աւեր, Երուսաղէմի ու տաճարի կործանում. իսկ այդ ամենը տեղի պիտի ունենան, որովհետեւ ժողովուրդը գուրս է եկել ուղիղ ճանապարհից, կուռք է պաշտում, վարք ու բարքով ապականուած արհամարհում է արդարութիւնն ու ճշշմարտութիւնը: Մարդարէն այս ճառերում իր հայրենակիցներին և թագաւորին խորհուրդ է տալիս չդիմադրել եկող Բաքելական սարսափելի յարձակումներին, որովհետև կոտորած, արիւնհե-

գութիւն և աւեր կլինեն աւելի մեծ չափով. յորդորում է անմիջապէս ընդունել նրանց հպատակութիւնը, միսիթարում աւերածից յետոյ Երկրում մնացածներին, իսկ գերիներին խոստանում է ազատութիւն 70 տարուց յետոյ: (Բ. 1—35 19):

Այս մասումն են և Երեմիայի գուշակութիւնները Յիսուս Քիստոսի մասին. «Ահա աւուրք գան ասէ Տէր և յարուցից Դաւթի ծագումն արդարութեան և թագաւորեցէ թագաւոր... և արացէ իրաւունս և զարդարութիւն ի վերայ Երկրի»: (ԻԳ. 5. 6.): Որ պէտքէ Դաւթի ցեղից Մեսիա գայ և նա կիշխէ և կպաշտպանէ իրաւունքն ու արդարութիւնը: Նոր Կտակարանում Յիսուս շատ տեղ անուանուած է Դաւթի որդի, Դաւթի ժառանգ, շառաւիդ. (Ղուկ. Ա. 68—70 ԺԸ. 38 Մատթ. ԻԱ. 10. 27):

2) Նկարագրում է Երուսաղէմի պաշարումը և կործանումը Նաբուգոդոնոսորի ձեռքով: Իւր մարդարէի կրած թշշուառութիւնները և մնացած հրէաների գաղթը Եղիպտոս (ԼԶ. 1—43. 7):

3) Երեմիան տալիս է մի խումբ հրէաների կեանքը Եղիպտոսում. այնտեղ ևս հրէաները շարունակում են իրենց մոլորութիւններն ու կուռքերին պաշտօն մատուցանելը. ծերունի մարդարէն այնտեղ էլ զգուշացնում է նրանց, կարգի հրաւիրում և գուշակում, որ շուտով

հզօր Բաբելոնի Նաքուգողնոսորը կարշաւի և
Եգիպտոսի վրայ, որ և կատարւում է Երուսաղէ-
մի կործանումից 5 տարիյետոյ:

Երրորդ մասն ամփոփուած է ԽԶ. գլխից
մինչև ԾԱ. գլուխը: Այս մասում արտասանած
իր գուշակութիւնների ճառերում թւում է, թէ
հարեան հեթանոս ազգերը ի՞նչ մասնակցութիւն
են ունենալու Եհովայի դատաստանն իրագործե-
լու Յուդայի վերաբերմամբ: Այդ ազգերն են
Եգիպտացիք, Փիւսիկեցիք (այլազգիք), Մովա-
բացիք, Ամաղեկացիք, Մադիամացիք և վերջապէս
Բաբելացիք:

4. Երեմիայի ողբը.

Երեմիա մարգարէն իր այս ողբը զրել է
Երուսաղէմի կործանումից յետոյ, ինչպէս ե-
րևում է վերնագրից և բովանդակութիւնից.
«Յետ գերութեան Իսրայէլի (ուզում է ա-
սել Յուդայի) և աւերածոյն Երուսաղէմի նստէր և
լայր և ողբայր Երեմիա զողբս զայս ի վերայ Ե-
րուսաղէմի»: Այս ողբը բաղկացած է 5 գլխից և
ամեն մէկը Երայեցերէն այբուբէնի կարգով
(ալէֆ, բէթ, գիմէլ, դալէթ, հէ և այլն 22 տա-
ռերի անուններով): Մարգարէն աւերակ դար-
ձած Երուսաղէմում մնաց սակաւաթիւ հայրենա-
կիցների հետ. ահա այդ ժամանակ, ազգասէր,

սրտացաւ, տասնեակ տարիներ առաջ այդ բոլորը
նախատեսնողը՝ սրտի խորունկ կոկիծով ողբում
է սիրելի Յուդայի և գուրգուրանքի առարկայ
Երուսաղէմի անցած փառքը և ներկայ թշուառ
դրութիւնը: Ամեն ինչ քարուքանդ եղած, սիրե-
լիները կոտորուած, մեծ մասը գերի տարուած, սի-
րուն Երուսաղէմն այժմ բուերի, մկների և չղչիկնե-
րի բնակարան դարձած. ինքը սակաւաթիւ մարդ-
կանց հետ մնացել է սգաւոր և լացող. «Հունինք
ոչ կերակուր, ոչ խմելիք, ոչ մի ապահովութիւն
սարուկ ենք և գերի. մեզանից խլուած է ամեն
ինչ. ամայացել է մեր հայրենիքը»:

Մարգարէն չի զանում միջնորդել Եհովա-
յին «Ընդէր մինչև խսպառ մոռացար զմեզ...
դարձո զմեզ Տէր և դարձցուք, նորոգեա զմեզ
Տէր իբրև զաւուրսն առաջինս» (Ե. 21):

Կ Բ Կ Ն Ո Ւ Թ Ե Ե Ն Հ Ա Մ Ա Ր

Երեմիա մարգարէ

1. Կենսագրական տեղեկութիւններ.
2. Յուդայի դրութիւնը սրա ժամանակ.
3. Երեմիան Եգիպտոսում.
4. Երեմիայի մարգարէութեան առանձնա-
յատկութիւնն ու նպատակը.
5. Գրքի մասերն ու բովանդակութիւնը.
6. Ողբը.

Գ. ԵԶԵԿԻՒԵԼ ՄԱՐԴԱԲԻ

(623 - 601)

1. Տեղեկութիւններ Եզեկիւէլ մարդարէի մնախն.

Ինչպէս երևում է սորա մարդարէութեան Ա. 3-ից Եզեկիւէլ Քուզա քահանայի որդին էր. 25 տարեկան հասակում Եզեկիւէլ Յուղայի թագաւոր Յէքոնիայի, ուրիշ իշխանների, նշանաւոր անձանց և 10,000 գերիների հետ գերի տարուեց Միջագետք: Իւր մարդարէական կոչումն ըստանում է այդտեղ, իր գերութեան 5-րդ տարին և Երուսաղէմի վերջնական կործանումից 7 տարի առաջ, ասորեստանցոց Նաբօնասար թագաւորի 30-րդ տարին: «Բացան Երկինք և տեսի տեսիլ Առոտւծոյ»: (Ա. 1.)

Տեսնում է սաստիկ փշող քամին հիւսիսից բերում է մեծ ամպ, որի մէջ կրակ էր վառում. ամպի շուրջը լոյսն էր փայլատակում. Երևում էին բազմազոյն անիւններ, շրջապատ մէջ բոցավառ կէտեր: Հիւսիսից մօտեցող ամ-

պի մէջ մարդարէն տեսնում է 4 կերպարանք՝ մարդու, առիւծի, եզան և արծուի. դրանցից իւրաքանչիւրի մէջ կայ միւսի որևէ մաս. օր մարդու մէջ կայ և առիւծի և եզան և արծուի մասն, այնպէս էլ միւսներից իւրաքանչիւրի մէջ, ամեն մէկն ուէր 2 թէ, 2 ձեռք: Երեսները դարձած զանազան կողմ և ամեն մէկը գնում էր զանազան ուղղութեամբ: Այդ ամենի գլխին Եզեկիլը Երկնքում տեսնում է ծիածանի նման բիւրեղեայ գոյնզգոյն կամար, որի վրայ աթոռի վրայ բազմած մարդու կերպարանքով մի երկոյթ: Մարդարէն Երեսի վրայ է ընկնում և լսում է մի ձայն, որ ասում էր, թէ վեր կաց և գնա անհնազանդ և ապստամբ Իսրայէլին քարոզելու. մարդարէն պէտքէ գնայ 130 տարի Միջագետքում գերի մնացած Իսրայէլի ժողովրդին յայտնելու Տիրոջ կամքը:

Այդ պարտականութիւնը կատարելու համար մարդարէից պահանջւում է, որ նա լինի աներկիւլ մարդկանց ապառնալիքների հանդէպ և հաւատարիմ այս կոչման մէջ: Նա յանձն է առնում իսկովթեամբ յայտնել ժողովրդին Տիրոջ կամքը: Այդպէս Եզեկիլը մարդարէն իր կոչումն ընդունեց Երուսաղէմի կործանումից 7 տարի առաջ և մնաց ու քարոզում էր Միջագետքի գերի հրէաների մէջ, նա հայրենիք չեկաւ իր մարդա-

բէութեան շրջանում, բայց նա քարոզներն այնպէս էր արտասանում, որ իբրև թէ Երուսաղէմումն է գտնւում. ուրեմն հոգով նա այնտեղ էր: (Հ. 1—3.):

Միջագետքում նա նախագուշակեց իր հայրենակիցներին Երուսաղէմի պաշարումը, (ԻԱ. 1—27), առնումը և Սեղեկիայի գերութիւնը. (ԺԲ. 1—20. Դ. 1—13):

Եղեկիէլ մարգարէն հաւատարիմ մնալով իր կոչմանը, ամենախիստ կերպով դատապարտում էր, թէ գերութեան մէջ և թէ ըուն հայրենիքում մնացած հրէաների հեթանոսական սովորութիւնները և զգուշացնում նրանց վերջնական կորստից:

Աւանդութիւն կայ, որ Եղեկիէլը Միջագետքում իր հայրենակիցների դատաւորն էր. նրանց աղատել է Քաղդիայի աւազակներից. և որ նրա խիստ վերաբերմունքը դէպի հեթանոսական նիստ ու կացը և սովորութիւնները, պատճառ դարձաւ, որ թշնամիները նրան նահատակեցին: Մինչեայժմ էլ Եփրատ գետի ափին աւանդաբար ցոյց են տալիս նորա գերեզմանը, որտեղ հրէաները շնել են իրենց ժողովարանը (սինագոգա):

2. Եղեկիէլ մարգարէի մասերն ու բովանդակութիւնը.

Եղեկիէլի գրուածքը բաժանում է 4 մասի:
Առաջին մասը պարունակում է նորա տեսիլը և մարգարէական կոչում. (Ա. 1—3, 27.):
Տիեզերքը, երկինքը, երկիրը և նրա վրայ եղած բոլոր երկոյթները, այդ ամենը մարգարէին երկում է իբրև հսրայէլի Աստուծոյ փառքը: Եսային ենովային տեսնում է Երուսաղէմի ձեռակերտ տաճարում, իսկ Եղեկիէլը՝ աւելի բարձր, երկնքում, երկնակամարին, իբրև ամենի, բոլոր աղգերի տէր և իշխան:

Տիեզերքի Տէրը հրամայում է մարգարէին գնալ օտարութեան մէջ, դարձեալ իրենց յամառութիւնները շարունակող հրէաների մօտ յայտնելու Աստուծոյ ահեղ և միենոյն ժամանակ արդար դատաստանը, որ գալու է մեղաւորների վրայ իբրև ուղղիչ միջնոց, սթափեցնելու և ուղելու:

Երկրորդ՝ այս մասում ամփոփուած են մարգարէի այն 13 ճառերը, որ նա արտասանել է Յուդայի ժողովրդի մասին, Երուսաղէմի կործանումից առաջ: (Դ. 1—24, 27.) Այս ճառերը լի են խորհրդաւոր պատկերներով, որոնց մէջ պատկերաւոր կերպով մարգարէն գուշակում է Երուսաղէմի զլիին գալիք արհաւիրքները Բաբելա-

ցիների ձեռքով։ Երուսաղէմի երկարատև պաշարումը գուշակելու համար երկար ժամանակ պառկում է ձախ կողքի վրայ, ինքը դործ է ածում պարզ և աղքատ կերակուր, ցորենի ալիւրի հետ գարու ալիւր է խառնում և այդ հացից ուտում, ցոյց տալու, որ Երուսաղէմ քաղաքի բնակիչները սովի ու նեղութեան կդատապարտուին։

Այս մասում մարգարէն արտասանում է մի խիստ և կրակոտ ճառ կեղծ մարգարէների հացէին, որոնք ժողովրդին հանգստացնում էին, թէ ոչ մի վտանգ չէ գալու, ընդհակառակը նորքա խոստանում էին մի ինչ որ խաղաղութիւն։ Նկարագրում է Յուղայի մայրաքաղաքի ապականուած կեանքը և խիստ յանդիմանութեամբ ցրում է այն թիւր կարծիքը, թէ եթէ Աստուած մեզ պատժում է, դա մեր հայրերի յանցանքի համար է. մարգարէն ասում է, որ ամեն մարդ պատասխանատու է իր թէ լաւ և թէ վատ գործերի համար. (ԺԼ. 1—32): Զնայելով, որ այժմ իսրայէլի ժողովրդի յանցանքն անցել է հայրերի արարքից, բայց և այնպէս Աստուած չի քանդում իր ուխտը, կզայ ժամանակ, որ Երուսաղէմը ամօթահար կլինի իր բոլոր արարքների հանդէպ «կանգնեցից ես դուխտ իմ ընդ քեզ և ծանիցես, թէ ես եմ Տէր, զի յիւ-

շեսցես և ամաչեսցես և մի ևս լիցի քեզ բանալ զբերան քո... ասէ Ազօնայի Տէր»։ (ԺԶ. 62, 63.):

Երրորդ՝ այս մասում ամփոփուած են Եղեկէլ մարգարէի այն 5 ճառերը, որոնց նա արտասանել է Յուղայի և հարեան հեթանոս ազգերի համար, Երուսաղէմի պաշարման ժամանակ և նրա կործանումից յետոյ։ Մէկ մէկ թւում է, թէ ինչպէս Ամազեկացիք, Մօքացիք Մադիամացիք և Փիւնիկեցիք, այդ բոլոր ազգերը Դաւթի ժամանակ Յուղային հպատակ էին, ինչպէս և Սիղոնն ու Տիւրոսը. խակ այժմ որքան են ուրախացած և խրոխտացած Երուսաղէմի կործանումը տեսնելով. բայց զրանք թող չպարծենան, զրանք ժամանակով կոչնչանան և զրանց անունը եղած ազգերի շարքում այլևս չի յիշուի, կլինեն միայն անցեալի սեպհականութիւն։

Հեթանոս ազգերի թւում նկարագրում է նաև Եղիպտոսի վիճակը, թէ ինչպէս Եղիպտոսի փառաւօնը իր զօրքով չարաչար ջարդում է նաբուգոդոնոսորի ձեռքով և Եղիպտացիք կդառնան թափառական, ցրուած աշխարհի բոլոր կողմերում։ Մարգարէն Եղիպտոսի փառաւօնին նմանեցնում է կենդանի և ուրախ կոկորդիլոսի, որը իր ջրում վխտում խաղում է, բայց Բաբելացիք

դուլս կքաշեն, սրով կջարդեն և կեր կտան դա-
ղաններին ու թռչուններին:

Մարգարէն լի—լի գլուխներում նկարադ-
րում է Յուդայի ողորմելի վիճակը Երուսա-
ղէմի կործանումից յետոյ:

Եղեկիէլը կրկին դեր ունի կատարելու, ժո-
ղովրդին յայտարարելու, համոզելու «որ մոլո-
րութիւն մեր (ժողովրդի) և անօրէնութիւնք
մեր ի մեզ են մեք ի նոսին մաշէիք». որ
մենք այս դառնաւթիւնները մեր մեղքերի ու
անօրէնութիւնների հոմար ենք կրում և Ադօ-
նայի Տէրը կամի «ոչ կամիմ զմահ ամրարշին,
որպէս զգառնալ ամրարշին ի չար ճանապարհէ
իւրմէ և կեալ»: Ուրեմն չնայելով, որ օտար-
ները ջարդեցին Յուդային, չնայելով, որ Երու-
սաղէմը քարուքանդ եղաւ, այնուամենայնիւ
Յուդային գուշակում է երջանիկ օրեր:

Մարգարէն Տէրը հրամայում է, որ յայտ-
նէ ժողովրդի հովիւներին (թէ հոգևոր է թէ մար-
մնաւոր ղեկավարներին), որ նոքա միայն հաւա-
քում էին իրենց եկամուտը, իսկ իրենց հօտի
օգտին և բարօրութեան համար չէին մտածում.
հօտը ցրուեց և կեր է դառնում գազաններին:
(լի. 1—15), Տէրը յայտնում է այդ հովիւներին,
որ ես ձեզ կզրկեմ ձեր փառքից, հօտը կառնեմ
ձեր ձեռքից. կնշանակեմ նրա վայ հովիւ Դաւ-

թի ցեղից (Մէսիա). հաշտութեան նոր դաշն
կկապեմ. նոքա կլինեն իմ ժողովուրդ, իսկ ես
կլինեմ նրանց Աստուած: (լի. 16—31):

Չորրորդ մասը կազմում է Եղեկիէլ մար-
գարէի գրուածքի Խ.—ԽԸ. գլուխը: Այս մասում
մարգարէն 50—54 տարրուց առաջ գուշակում է
Երուսաղէմի և տաճարի վերականգնումը գերու-
թիւնից յետոյ: Հոգով մարգարէն փոխադրում
է հայրենիքի բարձրութեան վրայ և նա այնտե-
ղից աեսնում է Երուսաղէմի հարաւային մասը:
Նրան պատահում է մի ուղեցոյց, որը մանրա-
մասն ցոյց է տալիս նորից կառուցած քաղաքն
ու տաճարը, նորա շրջապատը, 12 դռները, տա-
ճարի բոլոր մասերը, զոհի սեղանը. ուղեցոյցը
պատմումէ զոհի ծէսը, քահանայական պաշտա-
մունքի կարգ ու կանոնը: Նա մարգարէի հետ
որոշում է Պաղէստինի սահմանները և նրա մէջ
իսրայէլի 12 ցեղերի բնակավայրերը:

3. Եղեկիէլ մարգարէի առանձնայատկութիւնները.

Եղեկիէլի մարգարէութիւնը 1) լի է այլա-
բանական նշաններով և խորհրդաւոր գործողու-
թիւններով, որի պատճառով այս մարգարէու-
թիւնները վերալուծելիս՝ դժուարութիւնների ենք
հանդիպում լեզուի և ոճի մթութեան շնորհիւ.
այդ պատճառով հին թարգմանիչներին և մեկ-

Նիշներին Եղեկիէլ մարգարէի այս կամ այն կտորը տարբեր կարծիքների և բացատրութիւնների առիթ է տուել: 2) Եղեկիէլի մարգարէութեան մէջ շատ յաճախ Իսրայէլ կոչումը վերաբերում է ամբողջ ցեղին, անշուշտ նրա համար, որ գերութեան ժամանակ և այնուհեան Իսրայէլի մէջ բաժանում այլևս չկար: 3) Եղեկիէլը իր մարգարէութեան ժամանակ իրեն անուանում է մարդոյ որդի: 4) Իսրայէլի Աստուծուն յաճախ անուանում է Ագոնայի, Ագոնա—Սաբաօվթ, Պատերազմող Աստուած, Տէր Սաբաօվթ:

Կ Բ Կ Ն Ո Ւ Թ Ե Ե Ն Հ Ա Մ Ա Ր

Եղեկիէլ մարգարէ

1. Կենսագրական տեղեկութիւններ.
2. Եղեկիէլի մարգարէական կոչումը.
3. Նորա քարոզութիւնը Միջազետքում.
4. Նորա գրքի մասերն ու բովանդակութիւնը.
 - ա. կոչման աելիլը, Եհովան իբրև տիեղերը տէր:
 - բ. Երուսաղէմի կործանումից առաջ արտասանած 13 ձառերը.
 - գ. Երուսաղէմի կործանումից յետոյ նորա 5 ձառերը, հարևան հեթանոսու ազգերի մասին.
 - դ. Գուշակութիւններ Երուսաղէմի և տաճարի վերանորոգման համար գերութիւնից յետոյ.
5. Եղեկիէլ մարգարէի առանձնայատկութիւնները:

Պ. Պ Ե Ն Ի Է Լ Մ Ը Ր Գ Ա Ր Է

(600—529)

1. Տեղեկութիւններ Դանիէլ մարգարէի մասին.

Բարեկոնի Նաբուգոզոնոսոր թագաւորը Յովակիմին յաղթելով, մօտ 624-ին առաւ Երուսաղէմ քաղաքը: Տաճարի սրբազան անօթները Բարելօն ուղարկեց իրենց աստուածների տաճարներում պահելու համար: Թագաւորը ներքինապետին հրամայեց, որ իւր արքունիքում սպասաւորելու համար ընտրէ Իսրայէլի գերիներից՝ թագաւորական կամ իշխանական ծագում ունեցող, ընդունակ և գեղեցիկ պատանիներ: Ահա այս ընտրեալներիցն է Դանիէլը իր Անանիա, Ագարիա և Միսայէլը ընկերներով՝ Վերոյիշեալ տեղեկութիւնից երեսում է, որ Դանիէլը բարձր շրջանի զաւակն էր:

Որպէսզի զրանք, այդ ընտրելիները, իրենց ծագումը, առաջուայ կեանքն ու սովորութիւնը մոռանային՝ արքունիքում փոխում էին նրանց

անունները։ Այդպէս էլ Դանիէլի անունը գրին
Բաղդասարը, Բաբելօնում այս պատանիները ստա-
ցան քաղդէական ուսումը. մանաւանդ խստ
աչքի էր ընկնում Դանիէլի իմաստութիւնը։ Նո-
քա ինքնակամ կերպով հրաժարուեցին թագա-
ւորական ճոխ սեղանի համադամ կերակուրնե-
րից, որովհետեւ այդ կերակուրները պատրաստ-
ում էին կուռքերին զոհած մսից. և սիրով
բաւականանում էին միմիայն կանաչիով և ջրով
կերակրուել. բայց գրանք աւելի թարմ, աւելի
սիրուն և աշխոյժ էին, քան այնքան լաւ անունդ
ստացողները։ Այս 4 երայեցի պատանիները
ժամանակով Բաբելօնի իմաստուններից գերազան-
ցեցին։ Յատկապէս Դանիէլը իր իմաստուն և
շնորհալի հանճարով, երազներ մեկնելու շնոր-
հով և գուշակութիւններով երկար տարիներ շա-
րունակ, մինչև պարսից կիւրոս թագաւորը խոշոր
գեր խաղաց բարելականկեանքում։ Արքունիքում
նա պատասխանատու պաշտօն վարեց։ Նաբու-
գուռնոսորի հարստութիւնից յետոյ էլ՝ Դանիէլը
կրկին շարունակեց իր զօրեղ ազգեցութիւ-
նը. նա նշանակուեց 120 իշխանների գլխա-
ւոր (Զ. 1—4)։ Տեղական իշխանները նախան-
ձում էին նրան։ Եթե հրէաները գերութիւնից
վերադարձան, Դանիէլը մնաց Պարսկաստանում,
երեխ թագաւորի այդ հրամանը (վերադարձը)

պաշտօնի մէջ եղածներին չէր վերաբերում և
կամ ինքը գերադասեց մնալ այնտեղ արքունի-
քում և դրանով օգտակար լինել իր հայրենակից-
ներին։

2. Քաղաքական եւ կրօնական ոլութիւնը Դանի-
էլի ժամանակ.

Դանիէլ մարգարէի ժամանակ Յուղայի թա-
գաւորութիւնը, սկզբում Յովակիմ և Սեղեկիա
թագաւորների օրօք՝ հպատակ էր Բաբելօնին, իսկ
յետոյ, կործանուեց և երկիրը կորցրեց իր ան-
կահսութիւնը, միացուեց Ասորեստանին. Ժողո-
վուրդը գերի տարուեց Բաբելոն, իսկ մի մասը
գաղթեց Եգիպտոս, այսպիսով Յուղայի երկիրն
ամայացաւ։ Կիւրոսը իրաւունք տուաւ գերի-
ներին վերադառնալ հայրենիք, այդ պտղաբեր,
գեղեցիկ երկիրը շէնցնելու ու մշակելու։

Բաբէլօնի և ապա պարսից հզօր սրի առաջ
տմեն ինչ խոնարհուում էր և՛ երկիր, և՛ ժողո-
վուրդ, մինչև իսկ տիրած երկրների աստուած-
ները, և որտեղ մի նաբուգուռնոսոր կամ մի Դա-
րէն ոտք դնէին, այնտեղ հէնց իրենք հոչակւում
էին այդ երկրի աստուածներ. իրենց արձաններ
էին կանգնեցնում և հրամայում, երկրպագել:

Աղօթել և երկրպագել մանաւանդ Եհովային, միակ
Աստուծոյ պաշտամունքը՝ անհնար էր:

Ժողովուրդը հպատակւում էր իր մեծերի հրա-
մանին, երկրպագում էին նորանոր աստուածնե-
րին, շուտ շուտ մոռանում նրանց և մի ուրիշ
երկրպագելի և պաշտելի բան գտնում:

Կրօնի այս ընկած դրութիւնն անշուշտ չէր
կարող ունենալ որևէ բարոյական կողմ, կամ
ոկզունք. իշխող էր շահասիրութիւնը. ամենքի
ղեկավարն էր եսասիրութիւննուն հալարառութիւնը.
շունէին հասկացողութիւն ճշմարիտ Աստուծոյ
մասին. ժողովուրդը անկիրթ էր:

Դանիէլի ժամանակակից մարգարէներն էին
Երուսաղէմում Երեմիան, գերութեան մէջ՝ եղե-
կիէլը:

Դանիէլ մարգարէն գրել է 13 զլիսից բաղ-
կացած մի գրուածք, որի նպատակն է, ցոյց
տալ թէ Յուդայի ժողովուրդը գերութեան մէջ
և յատկապէս Դանիէլը իր Յ ընկերներով իրենց
կեանքով, իրենց հետ պատահած դէպքերով,
իրենց ընդունակութիւններով և իրենց գործած
մեծամեծ գործերով օրինակ հանդիսացան օ-
տարների առաջ: Հեթանոս ազգերին և մինչեւ
անգամ նրանց բռնապետներին համոզեցին, որ
Դանիէլի և միւսների պաշտած Եհովան է ճշմա-
րիտ Աստուծը:

Յանիէլ մարգարէի զրքի մասերն ու բովան-
դակութիւնը:

Դանիէլի մարգարէութիւնը բաղկացած է
13 զլիսից, բաժանում է 2 մասի. առաջին 6
գլուխները կազմում են զրքի պատմական մա-
սը, իսկ վերջին 7 գլուխը՝ մարգարէական մասը:

Առաջին պատմական մասը բովանդակում է
իր մէջ Դանիէլի գերութիւնը պատանեկական
հասակում. իր ստացած քաղգէական կրթութիւնը
Բաբելոնի արքունիքում, ասորական յառաջա-
դիմութիւնը, իւր իմաստութիւնը, երազներ
բացատրելու շնորհը:

Դանիէլ մարգարէն Բաբելոնի արքունիքում
մօտ 70 տարուայ փառաւոր ծառայութիւնից
իր գրքում յիշատակում է յատկապէս¹⁾ Նաբու-
գոդոնոսարի էրազը. Դանիէլ Բ. 1—49. Նա-
բուգոդոնոսարը իր թագաւորութեան բ. տարին
մի երազ տեսաւ, շփոթուած զարթնեց. մոռացէլ
էր իր երազը:

Քաղգէացի գիտնականներից ոչ մէկը չկարո-
ղացաւ թագաւորի տեսած երազը պատմել և
մեկնել. դրա համար թագաւորը հրամայեց կո-
տորել բոլորին. Դանիէլը մի փոքր ժամանակ
խնդրեց. իր ընկերների հետ աղօթեց Աստուծուն
և նրանից խնդրեց պահանջած երազի իմաստը:

Աստուած յայտնեց և նրա բացատրութիւնը:
Դանիէլը ներկայացաւ Նաբուգոդոնոսորին. թա-
գաւորը, զարմացած իր առաջ կանգնած պա-
տանի իմաստունի համարձակութիւնից, հարց-
րեց: «Կարողես պատմել իմ տեսած երազը և
ասել նորա մեկնութիւնը»:

Դանիէլը պատասխանեց, թէ թագաւորի
պահանջը վեր է մարդկային ոյժից երազների
մեկնութիւնը միմիայն Աստուծոյ գործն է. և
այժմ Աստուած իրեն ասել է թագաւորին
երազն ու նրա իմաստը: Դանիէլը հարց ու փոր-
ձի ենթարկելով թագաւորին և Նաբուգոդոնոսորից
իմանալով, որ նա երազը տեսնելու գիշերը նախ
քան քննելը մտածել է իր այսպէս փառաւոր
սկսած թագաւորութեան մասին, թէ ինչով
պէտքէ վերջանայ իր այդ մեծ թագաւորու-
թիւնը, և նվազագույնի իր յաջորդը՝ Դանիէլը
պատմեց, թէ իրը պատասխան քո այդ մտած-
ման և հարցման, թագաւոր, տեսել ես մի մեծ,
վիթխարի մարմին կամ արձան, որի գլուխը
ոսկուց էր, մէջքը և ձեռքերը արծաթից. կուրծ-
քը և բազուկները պղնձից. սրունքները երկա-
թից, իսկ ոտները կէսը երկաթից կէսը կալից:
Յետոյ սարից մի մեծ քար պոկուեց, գլոր-
ուեց գէպի արձանը, գիպաւ նրան և ջարդեց
և փոշի գարձրեց: Ինքը քարը արձանի տեղը

բռնեց, մեծացաւ, մեծացաւ ամբողջ աշխարհը
լցրեց: Սա է քո տեսած երազը, ասաց Դանիէլը
թագաւորը յիշեց, որ իրօք այդ է. իր տեսածը:
Դանիէլը շարունակեց. իսկ այս արձանը,
նրա կազմութիւնը և նրա հետ պատահած դէպքը
նշանակում է, քո թագաւորութիւն, որ մեծ է,
հզօր է և իշխուզ, քո յաջորդ թագաւորները
հետզհետէ կթուլանան, կմանրանան. և վերջը
երկրիս վրայ կատարատուի այդ բոլորի փոխա-
րէն Աստծոյ թագաւորութիւնը:

Հիացաւ թագաւորը Դանիէլի իմաստութեան
վրայ, մեծ պատիւներ տուաւ նրան, բարձրաց-
րեց նորա պաշտօնը, նշանակեց նորան ամբողջ
Բաբելոնի կառավարիչը և իմաստուների գլու-
խը: Յայտարարեց, որ ընդունում է Դանիէլի
պաշտած Աստուծոյ մեծութիւնը և խոնարհում
է նորա կարողութեան առաջ. «Արդարեւ Աստու-
ածն ձեր նա է Աստուած աստուծոց և Տէր
տէրանց և թագաւոր թագաւորաց, որ յայտնէ
զիսորհութեա»: (Բ. 47): Եւ շուտով Նաբուգոդո-
նոսորը համոզուեց, որ ամեն ինչ կատարում է
Աստուծոյ կամքի համաձայն, որ երկրաւոր բո-
լոր թագաւորները նորա կամքն իրագործող գոր-
ծիքներ են:

2) Դանիէլի Յընկերը Սեղբակ, Միսակ և
Սլեղնակովի պատիժը, որ Նաբուգոդոնոսորի

հրամանով՝ ձգում են պատուածի հորոցի մէջ (համառօտ պատմել):

3) Նաբուզոդոնոսորի յաջորդ Բարդառար թագաւորի խնձոյքը և տեսիլք—մանի, թէկէղ, փարես—չափեցի կշռեցի բաժանեցի. (պատմել):

4) Դանիէլը առիւծների գըսում Զ. 1—29. (Դանիէլի մեծութիւնը և Մարտա-Պարսից իշխանութեան օրօք մեծամեծ իշխանների նախանձը):

Երկրորդ՝ մարգարէտկան մասը գտնւում է Դանիէլի մարգարէութեան է. գլխից մինչեւ Ժթ-ը: Այս մասը պարունակում է Յուդայի ոտհմանակից հեթանոս ազգերի կեանքը Բարելոնի գերութիւնից յետոյ մինչեւ Մեսիայի գալը, կամ մինչև Աստուծոյ թագաւորութեան հոսատուելը երկրիս վրայ: Այս ազգերի ապագայ կեանքը Դանիէլը գուշակում է 4 տեսիներով: Թէ ինչպէս Բարելական տէրութիւնից իրար պէտքէ յաջորդեն Պարտկական, Յունական, Սիրիական և Եղիպտական (Պտղոմեան) իշխանութիւններ: Դրանք իրար ոչնչացնելով, իրանք պէտքէ թագաւորեն, մինչեւ իրուտացեալ Մեսիայի գալը: Զանազան երկրների ապագայ այս փոփոխութիւնները, որ գարեր յետոյ խսկութեամբ իրականացան, Դանիէլ մարգարէն, շատ վաղուց, Բարելական առենափայլուն շրջանում մարգարէացել էր:

—ունցած զին վրան Կիեկն Արք ԵԱՆ ՀԱՅ ԱՐՄԱՆԻ ԱՐՄԱՆՈՒՄ ավանդութեան ու առաջնորդութեան պատճենի բանակը (Ցանկութեան ու պատճենի բանակը):

1. Տեղեկութիւններ Դանիէլի մասին:

2. Դանիէլի և նրա 3 ընկերների կեանքը Ա. Ա. Բարեկամի արքունիքում:

3. Տեղեկութիւնների ժամանակ քաղաքական և կրօնական վայրեան կեանքը:

4. Դանիէլի գործի մասերն ու բովանդակութիւնը:

5. Պատմական (Նաբուզոզոնոսութեան պարագաները):

6. Հրազդ, Բաղդասարի տեսիլը:

7. Հրէտանակի առաջանակից տպանք:

8. Պատմական մատուցութիւն Մեսիա:

9. Ապագա պարագաները և պատճենի պատճենը:

10. Ապագա պարագաները և պատճենի պատճենը:

11. Ապագա պարագաները և պատճենի պատճենը:

12. Ապագա պարագաները և պատճենի պատճենը:

13. Ապագա պարագաները և պատճենի պատճենը:



Ի՞նչ կլինէր ժողովրդի կեանքը, նորա վարքն ու բարքը այս խառն ժամանակ. երբ բացարձակ կերպով սպանւում էին թագաւորները, տիրում էր անիշխանութիւն և ամեն բոլէ ապստամբութիւնը գլուխ էր բարձրացնում։ Ամովս մարզարէն այդ գրութիւնը այսպէս է նկարագրում «երկրում ոչ ճշմարտութիւն կայ, ոչ ողորմութիւն և ոչ էլ հասկացողութիւն ճշմարիտ Աստուծոյ մասին այլ կայ անէծք, ստութիւն, գողութիւն անբարոյականութիւն և յաճախակի սպանութիւն»։

Աքաբի և Յեղաբելայի ժամանակից Խորայէլի մէջ մուտք էր գործել Քահաղի պաշտամունքը. քահանաները, որ ժողովրդի բարոյականութիւնը և Աստուծոյ բարեպաշտութիւնը պէտքէ վառ պահէին, գարձել էին իշխանութիւն իրար ձեռքից խոզ թագաւորների կամակատար. Քահանաներից արհամարհուած, իշխանաւորներից ճընշուած. ժողովուրդը բնական մէջ, անբարոյականութիւնը բուն էր գրել ժողովրդի մէջ։

2. Ովսէի քաղաքների նպատակն ու ձեւը.

Ովսէն Խորայէլի հարազատ զաւակը լինելով անտարբեր չէր ժողովրդի քաղաքական և

(829 – 716)

1. Խորայէլի քաղաքական եւ կրօնական կեանքը
Ովսէ մարզարէի ժամանակ.

Ովսէն Երայի որդին է։ Մարզարէացել է
Յուղայի Ողիա, Յովաթամ, Եղեկիա և Խորայէլի
Յերոբովամ Ա-ի ժամանակ։ Ինչպէս տեսնում
ենք Ովսէն Եսայի մարզարէի ժամանակակից է։
Մարզարէացել է Խորայէլի մէջ, նորա ապագայ
կեանքը։ Իւր հայրենիքի թագաւորներից յիշում
է միայն Յերոբովամի անունը, թէ և եղել են
և ուրիշները։ Յերոբովամն էր միայն կանոնաւոր
կերպով Աստուծոյ օծեալ թագաւորը։ Յէռէի
տանից, իսկ միւսները ինքնակոչ խոնքարար,
ներքին երկապահութիւններով զբաղուած, իւրար ձեռքից գահը խլող, մէկին գահավէժ էին
անում, միւսին սպանում։ Նրանցից ոչ մէկը
Աստուծոյ հրամանով չէ օծուած «անձամբ թա-
գաւորեցին և ոչ ինչ» ասում է Ենովան Ովսէի
բերանով։ Այսպիսի գոյացուած ոչ ուղղական կայ

կրօնական այս անկմանը, Մարգարէական կոչումն ընդունելով՝ հանդէս է գալիս և իրահամ առօտ-կտրուկ քարոզներով՝ նկարագրում առէ իսրայէլի ժաղովրդի կեանքը, որ նա ճեռացած է իր Աստուծուց: Երկրի ամենախառն ժամանակ, ժողովրդի ամենաընկած օրերին, ժարգարէն յայտնում է, որ թող ժողովուրդը այդ ամենի մէջ տեսնէ Աստուծոյ ամենակարող աջը. որ առանց նորա կամքի ոչինչ չի լինի: Ովսէն մարգարէանում է, որ այս անմիխթար օրերից յետոյ ժողովուրդը կրկին կհասնի երջանիկ ժամանակին: անուղիւ առաջ և պահպատճառ ժամանակալիցների անբարոյական կեանքը, երկրի թշուառութիւնը մարգարէին մեծ շառէ պատճառում. զրա համարէ, որ նորա լեզուն, քարոզելու եղանակը կարճէ և կարուկ, ճոխէ և ոգեորուած, ովհի է առակներով, և այլաբանութիւններով այսպահանձն իրան զբանա պարունակութիւնը նկատ առջանած է 3. Ովսէի մարգարէութեան մասերն ու ժողանդառ արդիուրն նկութիւնը առաջանաւ (նախամանաց առաջինար այն առաջանաւ զայնդդայի մասնաւոյն) Ովսէ մարգարէի գրքի մէջ աշքաւեն ընկայնում 2 անսակ քարոզներ. և վարդ առաջին առասակի ճառերը խորհրդաւոր նշան նակութիւն ունին: Մարգարէն պատմում է ու իր և

անձնական կեանքի ձախորդ և դառն դէպքերը. իր ամբուսինը Ովսէին արմենաստոր կերպով դաւաճանելով՝ փախսել է տանից և ինքը մարգարէն իր զաւակների հետ ոդժբախտ դրութեան մէջ է: ժամանակական անձնական կեանքը իսրայէլի ժողովրդի օրինակն է: Խարեր շարունակ ժողովրդի և Եհովայի մէջ եղած դաշնայիմ խախտուած է. բայց ինչպէս որ Ովսէն ամեն միջոց գործ է զրել որպէսզի իր կնոջը եղ գարձնէ իր շեղած ճանապարհից և զառնայ վերստին իւր ամուսնական կեանքին, այնպէս էլ Եհովան վարւում է իր ժողովրդի հետ և աստ իսրայէլին աղէաների միջոցով կլրատէ, կզբաստացնէ: նորա հետ կնորոգէ իր վաղեմի դաշն, կընդունէ իւր խնամքից առժամանակ զըկուած զաւակներին: Ովսէն այսպէս առակի ձևով նկարագրելով իսրայէլի կեանքը, իր որդոցը տալիս է հարէէլ (Աստուած վրէժինդիրէ), Լօրուխամա (ողորմութեան շարժանացած) և Հօամմա (ոչ իմ ժողովուրդ) այլաբանական խորհաւոր անուններ, պատկերացնելով իսրայէլի կեանքը: Եհովային նկատ առջանած է զայնդդայի գրքի այս մասում ամփոփուած են Ովսէի մարգարէական ճառերը, որոնք արտասանուել են Խարայէլի քաղաքական ամենախառն

օրերին, երբ արտաքին արհաւիրքներից դաս
երկիրը շարունակ ներքին խռովութիւններով և
անիշխանութեամբ էր աառապում։ Երբ խախ-
տուել էին իսրայէլի ժողովրդի հասարակական
բոլոր կարգերը և կանոնները. Երբ իշխաններին
ու որոշ պաշտօն ու պարտականութեան մար-
դիկ՝ իրենց գերի մէջ չէին, այլ բռակէի ուժեղ
հոսանքի մէջ ընկած՝ ոտի տակ էին տալիս և
օրէնք և պարտականութիւն և իրաւունք։ Մար-
գարէն խիստ է վրդովուած մանաւանդ ժամա-
նակի քահանայական դասակարգի վրայ, որոնք
ոճրագործութեան մէջ այնքան են յառաջադի-
մել, որ մինչև անգամ փողոցային յափշտակու-
թիւններով են պարապած։

Նրանց բարձր կոչումն ու պարտականութիւնն
է քարոզել Աստուծոյ կամքը և բարի օրինակ լի-
նել ժողովրդի առաջ, բայց վիխանակ իրենց
կոչմանը ծառայելու—արտաքին ծիսակատարու-
թիւններով են զբաղուած. ժողովրդի անկարգու-
թեան և անբարշտութեան չափը որոշելու հաշ-
մար մարգարէն քահանաների անկարգութիւնն
ու հակառակութիւնը օրինակ է բերում ասելով.
«Ժողովուրդ իմ իրեւ զբահանայն հակառակող».

Դ. 4. Մարգարէն մի առանձին ճառով դատա-
պարտում է բարձր պաշտօնեաներին, զօրավար-
ներին, մինչև խկ թագաւորներին, որոնք իրենց

մեծութիւնն ու իշխանութիւնը ձեռք են բերում
դաւադրութիւններով և ներքին պատերազմներով
դրանք դարձել են անամօթ, զեխ, արքեցող և
խեղկատակ և դրանցից այլնս իրաւունք և ար-
դարութիւն չէ կարելի սպասել։

Թէ առաջին և թէ երկրորդ մասերում երկրի
ընկած դրութիւնը նկարագրելով՝ մարգարէն ե-
ղած խառնակ և անմիխթար դրութիւնը համա-
րում է միայն նախերգանք, սկիզբն այն սոսկա-
լի արհաւիրքների և թշուառութիւնների, որ
գալու են իսրայէլի զլիին, զուշակում է երկրի
աւերն ու կործանումը։

Այս ամենը մարգարէանալով, Ավաէն, ինքը
ոչ թէ չեղոք, անտարբեր կամ թշնամական
դիրք է բռնում դէպի բարոյապէս ընկած հայ-
րենիքը, այլ սրտով ցաւում է և մորմոքում է
իւր ժողովրդի ներկայ և մանաւանդ գալիք աղէ-
տների համար։ Նրա ամեն մի խօսքը խորին
յուզմունքի և վրդովլունքի արտայայտութիւն է։
Յորդորում է ապաշխարանք, ապաշխարանք սր-
տով, և ոչ արտաքին։ Զոհերն ու տուրքը չեն
կարող Ենովային հաշտեցնել։

Իսրայէլը պէտքէ ապաշխարէ, հոգով ողբ-
տով նուիրուի Ենովային. ժողովրդի նոր կեանքը
հիմնուած պէտքէ լինի ազօթիք, սիրոյ, բարե-
պաշտութեան, հաւատքի և արդարութեան վրայ։

Մարգարէն ուրախականում է և որ իսրայէլը իր այդ
թշուառութեան օրերին կը սթափուի և դարձի
կգայ: Այսպիսի նյի՛ն

«Ի նեղութեան իւրեանց կանխիսցեն առ իս
և ասացեն. դարձցոք իւրթիցուք առ Տէր Աս-
տուած մեր. զի Նա էնադ զմեղ և Նայն բժշկե-
սցէ վիրաւորեաց և սպեզանի. զիցէ իվերայ մեր:»

Զ. 1-2.

Թէկ մարգարէն տեմում է իսրայէլի այս
ընկած, մոլորուած, անօրէն կեանքը, բայց վրա-
տահ է, որ Եհովան չի կորցնի իր ժողովրդին,
յաւիտեան չի մոռանայ իւր ընտիր ժողովրդին:
Նա իսրայէլին որդեգրել է, գաշն է կապել, ինչ-
պէս ամուսինն իր կնոջ հետ. և ինչպէս սիրով
ամուսինը կնոջ անհաւատարմութիւնը կմոռանայ
և կերթայ, ներողամիտ կլինի դէպի նա, այնպէս
էլ Եհովան վերջապէս կզթայ իր ժողովրդին:
Մարգարէն միանգամայն հաւատացած է, որ
Աստուծոյ ուղարկած այս պատոհասները կատա-
րում են բարի և խրատական նպատակով:

Զրկուել հայրենիքից, իրաւունքի և արդա-
րութեան խախտումը ժողովրդի մէջ, երկրի
աշխատութիւնը, այս բոլորը միջոցներ են զգաս-
տանալու և դառնալու դէպի իրենց Աստուծը
Գ. 5 Ե. 15.:

ուր ով պատրակ է ի իմ Անահիւ Ամերիկայուն
վեցար և վափառն ով միջնոր մարդկանուն:

Ովսէ մարզարէ

ով առ մերային բարեկայ մարդկարեմ Պ.
ով ոչ 1. Իսրայէլի դրութիւնը Ովսէի ժամանակ.
2. Ովսէի քարոզների նպատակն ու ձեր.
3. Ովսէի մարգարէութիւնն մասերն ու բո-
ւունքն ասուն վանդակութիւնը և սահմանական վանդակութիւնը.

ա. Իր ընտանեկան դժբախտու-
ութիւնն ու նրանց խորհրդաւոր
ու պատ զանակութիւնը:
Բ. Ներքին խովութիւններ. քա-
հանայական գասակարգի ընկած
դրութիւնը.

4. Ովսէն յորդորում է ապաշխարանք:
իսկ այսպէս և այս համ ով այս այս
շատունի զանգիւթեաւու օւժնու և այս պատճենի
ուրաքանչ առ ձեզ վիճակուն անհաջող և
անհաջող ու այս պատճենի ուրաքանչ ու
այս հարաւան այս պատճենի անհաջող և
անհաջութեան անհաջարեն ուրաքանչ

Հայրաւանը մայնաւուշով և պայու ու նաև ի
արդու և պայմանով ըստգիմնուս ընտանի
կը լի այն պրշիրուն զնաւուայ մայնաւ
ուր ով ուղարկի պայու ով ուղարկաւուն
գիտուուն ըստի պայու ուրաքանչ և այսուն

1. Յ. Յ. Յ.

Զ. Ա Մ Ո Վ Ս Մ Ա Ր Դ Գ Ա Ծ Ե Բ Ի

(807 - 778)

1. Տեղեկովթիմներ Ամովս մարգարէի մասին.

Ամովսը Երուսաղէմից հարաւ, 8 վերստ հեռաւորութեան վրայ գտնուած Թեկուա աւանիցն էր: Ապրում էր Յուղայի Ողիա և իսրայէլ Յերոբավմ Ա-ի ժամանակ: Մինչև մարգարէական կոչում ստանալը իր կեանքի մասին ասում է: «Ես ոչ մարգարէ էի և ոչ որդի մարգարէի. այլ հովիւ էի և թութ քաղէի: Եւ էառ զիս Տէր ի հօտից և ասէ ցիս Տէր. գնա դու և մարգարէաց ի վերայ ժողովրդեան իմում իսրայէլի» է. 14—15: Ուրեմն նա առաջ հովիւ էր և կերակրում էր պառւղներով: Հետեապէս հասարակ ծագումից էր նա և աղքատ: Իր մարգարէական կոչումն ստացաւ վերոյիշեալ թագաւորների ժամանակ, մեծ երկրաշարժից 2 տարի առաջ. Ա. 1: Գործեց նա իսրայէլի մէջ, աւանդութեան համաձայն Բեթելի քուրմը սպանել է նրան փայտի հարուածով:

Ամովս մարգարէի լեզուն շատ պարզէ: Ժողովրդական առակներով և նմանութիւններով համեմած. իբրև հովիւ, երբ նա խօսում է՝ օրինակներ և նմանութիւններ է բերում իր հովուական կեանքից. Աստուծոյ հրամանը նմանեցնում է գոչող առիւծի ձայնին. Ժողովրդի ժեծութիւնը համեմատած է եղենու և կաղնու փարթամութեան հետ. փչացած՝ անբարոյական կանանց անուանում է կովեր. զալիք թշուառութիւնը նմանեցնում է չորութեան, ամայութեան, արօտների բացակայութեան և այլն:

Ամովսով սկսում է մարգարէական նոր դար: Եղիայից և Եղիսէից յետոյ՝ Իրայէլի մէջ յառաջ էր եկել մարգարէների և տեսանողների դասակարգ, որը իր յախուռն և անսովոր գործերով և կեանքով յայտնի էր ժողովրդի մէջ: Այս դասակարգի մարդիկ երբեմն համակերպուել գիտէին հզօրներին: Ամովսը չէ եւ ցանկանում գրանց պատկանել. ինքը և սրա յաջորդները հանդէս են գալիս Եհովայի անունով:

Նորա կամքը լրջօրէն քարոզում և հաւատարիմ մնալով իրենց կոչմանը անվեհեր են կանգնում ամեն տեսակ թշնամանարքի, սպառնալիքի, հալածանքի ու նեղութեան հանդէպ:

2. Ամովսի ժամանակ Խորայէլի վիճակը եւ նորա
մարզարէանալու առիթը.

Յովասի որդի Յերօբովամ Ա-ի Երկարամեայ
թագաւորութիւնը Խորայէլի համար փայլուն
շրջան էր։ Հէնց Յովասի ժամանակուանից Խո-
րայէլացիները իրանցից թոթափել էին Սիւրի-
ացւոց գերիշխանութիւնը, իսկ Յերօբավամ Ա-ը
ամբողջ Սիւրիանիր իշխանութեան ներքոյ առաւ։

Այս յաջողութիւնը Խորայէլի համար դար-
ձաւ պարծանքի և ինքնահաւանութեան առիթ,
իսկ յաղթութիւններով ձեռք բերած հարուստ
աւարը՝ շքեղութեան և շուայլութեան պատճառ։

Ինչպէս առհասարակ, այժմ էլ, այս ծաղ-
կած ժամանակ, Խորայէլացւոց մէջ բազմաթիւ
էին կեղծ մարգարէներ, շողոքորթ քարոզիչներ,
որոնց շնորհիւ Խորայէլի ինքնավստահութիւնը,
մեծամտութիւնը և անբարտաւանութիւնը աւելի
արժատացել էին։ Անժուժկալութիւնը, խեղճե-
րին ճնշելը, բռնութիւնը, անարդարութիւնը,
կռապաշտութիւնն ու հեթանոսական բարքը ըս-
տիրող էին Երկրում։ Անշուշտ քուրմերն ու կեղծ
մարգարէները՝ ժողովրդին սթափեցնելու համար
չէին էլ մտածում։ Երկրի այս կեղծ դրութիւնը
պատճառ դարձաւ Ամովսի մարգարէանալուն։

Ահա հանդէս է գալիս ճշմարտութեան քա-

րոցիչը։ Հասարակ մարդ, հովութիւնից մարգարէ
հրաւիրուած, ըստոյ ոգեսորուած է Աստուածային
հոգով, ձշմարիտ մարգարէական յափշտակու-
թեամբ։ Մարգարէ է կարգւաւմ, որպէսզի Խո-
րայէլին լայտնէ իւր կացութիւնը, որ ներկայ
երջանկութիւնը, արտաքին փայն ու շքեղութիւ-
նընմանէ ամն հանգստութեանը, որին յաջորդում
է մրրիկ կամ սարսափելի փոթորիկ, որի հարու-
ածներից կաւերուինը արանց հալթենիքը։ Մարգա-
րէն հանդէս է գալիս և քարոզում, որ Եհովան
այլևս ժողովրդին չպէտք է խնայէ։

3. Ամովսի մարզարէի գրքի մասերն ու բովանդա-
կութիւնը.

Ամովսի մարգարէի գրուածքի մէջ աչքի է
ընկնում.

Առաջին՝ գուշակութիւններ Խորայէլի սահ-
մանակից Սիւրիացոց, Փիւնիկեցոց, Տիւրոսի,
Երումացոց, Մոաբացոց, Ամոմիացոց և Երուսա-
ղէմի մասին։

Բոլոր ազգերի և Երկրների կեանքն ու պա-
տահարները աեղի են ունենում միայն Եհովայի
կամքով։ Որին պէտք է Երաւաղէմում Երկր-
պագել, Եհովան տիեզերքի միահեծան Տէրն է.
աղատ կերպով իշխում է օտար զօրքերի, ազգե-

թի և թագաւորութիւնների վրայ։ Օտար գօրքը գործիք է Եհովայի ձեռքին, Իսրայէլին պատժում է օտարի գօրքով։ Եհովայից է կախուած ախեղերքի պատժութեան ընթացքը և ճաշկատագիրը։

Վերոյիշեալազգերի վախճանը նկարագրելով՝ ամեն մէկի համար արժանի պատիժ է որոշում, օրինակ Յուդային (Երուսաղէմին) Աստուծոյ օրէնքը զանց առնելու համար և կուռքերին յարելու համար. «Առաքեցից զհուր ի վերայ Հրէաստանի և կերիցէ զհիմունս Երուսաղէմի», Բ. 5. գուշակում է ուրեմն Երուսաղէմի կործանումը և այրումը, որ և կատարուեց 200 տարի յետոյ Նաբուգոդոնոսորի ձեռքով։

Ծրկորու մասը մարգարէական ճառ է Իսրայէլի թագաւորութեան մասին; Նկարագրում է Իսրայէլի մեղքերը, որ նրա մէջ օրաւուր շատանում է անօրէնութիւնը, դատավարութեան մէջ չկայ արդարութիւնը. ճշմարտութիւն ասելը վտանգաւոր է դարձել, կաշառքը դարձել է սովորական բան, աղքատները ճնշուած են և անարգուած։ Նոցա ճնշուած դրութիւնից օգուտ են քաղում ունեոր դասակարգերը, կողոպտում և հարստահարում, և մինչև խեղճ ժողովուրդը ողորմելի վիճակի մէջ է, իսկ հարուստները անձնատուր են շուայլ և զեխ կեանքի։

Մարգարէն Եհովայի կողմից յիշեցնում է, որ Իսրայէլը ընտրուած է Աստուծոյ կողմից, դարեր շարունակ նորա խնամքը վայելած, Եղիպտոսից ազատել սիրել է նրան «Հանի յերկրէն Եղիպտացւոց. զձեզ ընտրեցի յամենայն ազգաց երկրի, վասն այնորիկ ի ձէնջ խնդրեցից զվրէժ ամենայն չարեաց ձերոց»։ Գ. 1, 2: Իսրայէլը պատասխանատու է, Աստուած նրանից վրէժինդիր է լինելու: «Ձեր աղօթքը ես չեմ լսի, ձեր փառաբանութեանը ականջ չեմ դնելու. ինչպէս մի հեղեղ, ձեզ վրայ ահեղ դատաստան կդայ» ասում է մարգարէն: Նա մարգարէական աչքով տեսնում է, որ այն բեմերը, որոնց վրայ անարդար աստուածապաշտութիւններ են կատարում կկործանուին և իրենց փլատակների տակ ժողովրդին կծածկեն: Տօնախմբութիւնները կդառնան սգոյ ժողովներ, իսկ երգերը՝ կոծ և կական: Մարգարէն սրտով մամսակցում է Իսրայէլի դասնութեանը: Յորդոր է կարդում իր ժողովրդին ապաշխարել, դիմել Աստուծուն «իմնդրեցէք զՏէր և կեցջիք... Խնդրեցէք զբարի և մի զչար, զի կեցջիք և եղիցի ընդ ձեզ Տէր Աստուած ամենակալ... հաստատեցէք իրաւունս ի զրունս ձեր, զի ողորմեսցի Տէր Աստուած մացորդաց Յովսէփայ» Ե. 14—16: Սակայն ապաշխարել, դիմել Աստուծուն չպէտքէ հասկա-

Ասլ լոկ ատճարի Աստուածպաշտութիւնը. ոչ,
Իսրայէլի Աստուածուն դրանք չեն դուր գալիս.
«Ատեցի, մերժեցի զտօնս ձեր և ի տարեկանս
ձեր ոչ հոտուեցայց. զի եթէ մատուցանէք զող-
ջակէզս և զահս ձեր՝ ոչ ընկալայց... ի բաց ա-
րա յինէն զձայն երգոց քոց զնուագ սրնգացքոց
ես ոչ լուայց ե. 21—23:

Եհովան այդ արտաքին պաշտամունքին, զո-
հին. երգին, ծէս ու արարութեանը այնքան
էլ նշանակութիւն չէ տալիս:

Եհովան, թէև Իսրայէլին խստիւ պատժում
է, սակայն մի մասի համար այդ բարկութեան
դատաստանը փրկարար հետևանքներ կունենայ:
Թէև այժմ Աստուծոյ ձայնին ականջ չեն դնում,
բայց այդ պատռհամների շնորհիւ Իորայէլի մէջ
կարթնանայ քաղց և ծարաւ դէպի Աստուծոյ
խօսքերը: Այդպէս է և Յուդան. նա էլ իր մեղ-
քերի համար մեծ պատժի է արժանանում,
այնուամենայնիւ մեծ առաջայ ունի: Միւս մո-
լորուած ցեղերի համար փրկութիւն կծագի Յու-
դայից. Դաւթի տունը կվերականգնի և իր նախ-
ին մեծութեանը կհասնի «յաւուրս յայնմիկ
կանգնեցից զխորանն Դաւթի զանկեալն» թ. 11:

Ուրեմն Յուդայի նման Իսրայէլին էլ Եհո-
վան Ամովս մարգարէի բերանով փրկութիւն է
խոստանում:

Եղորդող՝ Ամովս մարգարէի զըքի մէջ պա-
տահում ենք այլաբանական Յ տեսիների.

ա) Եհովան Իսրայէլի երկրի մորեխ է ու-
ղարկում, մարգարէի աղօթքով անցնում է այս
պատիժը. դրան հետեւում է սաստիկ սովոր մար-
գարէի աղօթքով այդ էլ է անցնում: Ամովսը
դիմում է Տիրոջը պարսպի վրայ կանգնած լարը
ձեռքին, չափում է պատիսուղութիւնն: Եհովան
լարով կշափէ երկիրը ոչ ոքին չպէտքէ խնայէ:

բ) Մարգարէին տեսիլքում երեսում է մի
կոչով (վանդպկ), նշան է որ «հասեալ է վախ-
ճան ի վերայ ժողովը գեան, իմոյ Իսրայէլի. Եհո-
վան այլու չի համբերի. որը պատիժը էլ չի
ուշացնի:

գ) Ամովսը տեսնում է Տիրոջը կանգնած
զոհի սեղանի վրայ և հրամայում է մարգարէին,
կործանել այդ շինութեան վերին մասը. իսկ
մնացածը կկործանուի սրով, նշանակում է Աս-
տուծոյ գալիք դատաստանով «իսպառ ոչ ջնջե-
ցից զտունն Յակոբու». իսկ այնուհետեւ Դաւթի
ցեղից կզայ Մեսիա: Նա ծէսն ու պաշտամունքը
աւելորդ կհամարէ, կկործանէ սեղանը և կհիմնէ
նորը՝ եկեղեցի:

ԿՐԻՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Ամովս մարզաք

1. Կենսագրական տեղեկութիւններ.
2. Լեզուն ու նմանութիւնները.
3. Կեղծ մարդաբէներ.
4. Ամովսի ժամանակ իսրայէլի վիճակը և նրա մարդաբէնալու առիթը.
5. Ամովսի գրքի մասերն ու բովանդակութիւնը.

ա. Եհովան իբրև միահեծան Տէր.
բ. Իսրայէլի մէջ շատացած մեղքերը, հետեանքը, փրկութեան խոստումը.
գ. Այլարանական տեսիլները (մորեխ, սնվ, լար, կաթսայ, կիսակործան զոհի սեղան):

Վ Ե Բ Ֆ

Յ Ա Շ Ա Յ





404.

29-

16035

Apr

2-12

gWB

shp

1973



1913